# Ազգ

Azg

17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2011 ՇԱԲԱԹ 229(4847)

ISSN: 1829-1651


# Մինչեւ թուրք պատգամավորները հասնեն Փարիզ՝ Էրդողանը նամակ է գրել Սարկոզիին

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Դեկտեմբերի 22-ին ընդառաջ, երբ Ֆրանսիայի Սենատում նախատեսվում է քննարկել եւ քվեարկել Հայոց ցեղասպանության հերքումը քրեականացնող օրինագիծը, Թուրքիան անցել է արդեն հոխորտանքներին ու սպառնալիքներին՝ կրկնելով բոլոր այն քայլերը, որ հաճախ թուրքական իշխանություններն իրականացնում են յուրաքանչյուր դեպքում, երբ որեւէ երկրում շրջանառության մեջ է դրվում Հայոց ցեղասպանությանն առնչվող որեւէ նշանակալի նախագիծ՝ լինի ճանաչում, ընդունում, դատապարտում, թե ուղղակի հիշատակ:

«**Ազգն**» արդեն տեղեկացրել է, որ Թուրքիան սպառնացել է իր դեսպանին հետ կանչել Փարիզից՝ «խորհրդակցությունների», եթե Ֆրանսիայի Սենատն ընդունի այդ օրինագիծը, շեշտադրմամբ, թե օրինագծին արդեն օրենքի ուժ տալը «մեծապես կվնասի» թուրք-ֆրանսիական հարաբերությունները այնպես, կարծես դրանք լավագույն ավանդույթների ու բարիդրացիության օրինակ են: Ամեն դեպքում, սպառնալիքը բավարար չէր, Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատվիրակությունն էլ այս կիրակի արդեն կլինի Փարիզում՝ «բանաձեւի ընդունումը կանխելու» առաքելությամբ:

Երեկ էլ Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն է նամակով դիմել Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիին՝ զգուշացնելով, որ Հայոց ցեղասպանության հերքումը քրեականացնող օրենքի անցկացումը «ծանր հետեւանքներ» կունենա: Մոռանալով, թե ինչ «գեղեցիկ խոսքերով ու խորհուրդներով» էր Ֆրանսիայի նախագահին պիտակել հենց ինքը՝ Էրդողանը, նա, թուրքական էլեկտրոնային կայքէջերի փոխանցմամբ, Սարկոզիին կոչ է արել կանխարգելել օրինագծի ընդունումը, այլապես հենց Ֆրանսիան պետք է պատասխանատու լինի ֆրանս-թուրքական հարաբերություններում «ծանր հետեւանքների» համար:

Տես էջ 3

# Շնորհվեցին մամուլի «Ազդարար» մրցանակները

5 մրցանակ հայ մամուլում ունեցած ավանդի ու օգտավետ աշխատանքի համար: Երեկ Հայաստանի ժուռնալիստների միությունում շնորհվեցին միության «Ազդարար» մրցանակները:

Մրցանակներ ստացան Հանրային հեռուստաընկերության լրագրող **Արթուր Բախտամյանը**, «**168 ժամ**» թերթը, «**Ազգ**» օրաթերթի թղթակից վերլուծաբան **Վահրամ Աթանեսյանը**, լրագրող, արձակագիր, հրապարակախոս **Հրաչյա Մաթեւոսյանը** եւ Իրանում լույս տեսնող «**Ալիք**» օրաթերթը:



Ժուռնալիստների միության նախագահ **Աստղիկ Գեւորգյանը** հակիրճ ներկայացրեց տարվա ընթացքում մրցանակակիրների ձեռքբերումները: «168 ժամը» ապահովել է բազմակարծություն ու պահպանել էթիկայի կանոնները: Տիկին Գեւորգյանը նաեւ բարձր գնահատեց Արթուր Բախտամյանի «Հայոց հարց» հաղորդաշարը, որը հեռարձակվում է Հանրային հեռուստատեսությամբ:

Տես էջ 2

# Մտահոգություն

*Սիրիայի Արաբական Հանրապետության շուրջը ստեղծված իրավիճակի եւ հայ համայնքի վերաբերյալ*

**ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ կուսակցություններն իրենց մտահոգությունն են հայտնում Սիրիայի Արաբական Հանրապետությունում ստեղծված իրավիճակի եւ այնտեղ շարունակվող անհանգստությունների կապակցությամբ: Սիրիան մեզ բարեկամ երկիր է, որը Ցեղասպանությունից մազապուրծ մեծաքանակ հայության համար ապաստան դարձավ եւ փրկեց հազարավոր հայորդիների կյանքեր: Հայ ժողովուրդը միշտ էլ երախտապարտ է եղել այդ պետությանը եւ նրա ժողովրդին՝ ցուցաբերած այդ հյուրընկալության ու հոգատարության համար:**

**Սիրիահայությունը կարողացավ շատ արագ ինտեգրվել երկրի կյանքին եւ ոչ միայն դարձավ այդ երկրի լիիրավ քաղաքացին, այլեւ իր զգալի ավանդը ներդրեց Սիրիայի Արաբական Հանրապետության կայացման եւ զարգացման գործում:**

**Այսօր, երբ Արաբական աշխարհի այդ կարեւոր պետությունը գտնվում է ներքին եւ արտաքին ուժերի դաժան ճնշումների ներքո եւ վտանգված է տեղի հայության ապագան, մտահոգ է ողջ հայությունը:**

**ՀՌԱԿ եւ Արմենական-ՌԱԿ կուսակցություններն այս վճռական պահին հանդես են գալիս համատեղ հայտարարությամբ՝ կոչ անելով դադարեցնել արտաքին ճնշումները Սիրիայի նկատմամբ եւ հնարավորություն ստեղծել այդ երկրին եւ նրա ղեկավարությանը իր ներքին հարցերը լուծելու խաղաղ բանակցությունների միջոցով, ինչը խաղաղության հասնելու միակ գրավականն է: Հուսով ենք, որ մեր հայրենի իշխանությունները կցուցաբերեն ամեն բարոյական աջակցություն Սիրիայի պետականության, ժողովրդին եւ հայ համայնքին՝ ստեղծված իրավիճակը հաջողությամբ հաղթահարելու գործում: Կարծում ենք, որ զարգացումների լիբիական տարբերակն այդ երկրում անհնար է եւ անընդունելի, ինչպես նաեւ այն սպառնալիք է տեղի հայության եւ նրա ապագայի համար: Խաղաղ բանակցություններն են միակ ճանապարհը առկա խնդիրները լուծելու, դեմոկրատական բարեփոխումները իրականացնելու եւ սիրիահայ համայնքի բարգավաճումն ու ծաղկումը այդ հյուրընկալ հողի վրա ապագայում եւս տեսնելու համար:**

ՀՌԱԿ ատենապետ
ԷԴՎԱՐԴ ԱՆՏԻՆՅԱՆ

Արմենական-ՌԱԿ հանրապետական
վարչության ատենապետ
ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Նրանք արդեն կամ դեռ 7-ն են

**Չնայած Արեւմուտքը՝ գոնե փորձագիտական-վերլուծաբանական մակարդակով, արդեն պատրաստվում է «Պուտինյան Ռուսաստան. երկրորդ տարբերակին», Ռուսաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը շարունակում է ընդունել՝ ՌԴ-ի նախագահի թեկնածուներից գրանցման փաստաթղթեր: Այս պահին ՌԴ ԿԸՀ-ը իրենց փաստաթղթերն են ներկայացրել Վլադիմիր Պուտինը, Կոմկուսի առաջնորդ Գենադի Զյուգանովը, ռուս գլխավոր լիբերալ-դեմոկրատ Վլադիմիր Ժիրինովսկին, «Սպրավեդլիվայա Ռոսիա»-ի նախագահ Միրոնովը, գործարար-միլիարդատեր Միխայիլ Պրոխորովը, «Դրուգայա Ռոսիա» կուսակցության առաջնորդ Էդուարդ Լիմոնովը եւ Իրկուտսկի նահանգապետ Դմիտրի Մեզենցեւը:**

**Երեկ ներկայացնելով իր փաստաթղթերը՝ Ժիրինովսկին բարձրաձայնել է ընտրություններին մասնակցելու իր կարգախոսը՝ «Հանձնվեք»: Լիբերալ-դեմոկրատների առաջնորդը ընդգծել է, որ այս կարգախոսն ուղղված է բոլոր կաշառակերներին: Ժիրինովսկին իրեն մրցակից է համարում միայն Պուտինին եւ Զյուգանովին, եւ վստահեցրել է՝ «Մարտի 14-ին տեղի կունենա իմ երդմնակալության արարողությունը, ես կստանձնեմ ՌԴ նախագահի պաշտոնը»: Մեկ այլ թեկնածու՝ «Սպրավեդլիվայա Ռոսիա»-ի նախագահ Միրոնովը գրազ է եկել մեկ շիշ կոնյակի վրա, որ ինքը Պուտինի հետ կանցնի նախագահական ընտրությունների երկրորդ փուլ:**

**Ռուսական ԶԼՄ-ները ընդգծում են, որ անցած ՌԴ Պետդումայի ընտրություններին էլ Միրոնովը գրազ էր եկել, որ եթե իրենք ավելացնեն ունեցած մանդատների թիվը Պետդումայում, ապա կուսակցությանը կնվիրեն «մեկ շիշ էժան շամպայն», իսկ եթե չավելացնեն, ապա Միրոնովն անձամբ լրագրողներին կհյուրասիրի «մեկ արկղ թանկարժեք շամպայն»: «Մոսկովսկի կոմսոմոլեցը» գրում է, որ չնայած Միրոնովի կուսակցությունը ավելացրեց մանդատների քանակը, սակայն լրագրողները «մեկ շիշ էժան շամպայն չգնեցին», փոխարենը Միրոնովը «մեկ արկղ թանկարժեք ալկոհոլային խմիչքով հյուրասիրեց» տարբերականի լրագրողներին:** Հ. Ա.

# Եվրախորհրդարանի բանաձեւը ՄԱԿ-ի ԱԽ-ին ոչ մշտական անդամից պահանջում է «հարգել մարդու իրավունքները»

**Եվրախորհրդարանը դեկտեմբերի 15-ին բանաձեւ է ընդունել Ադրբեջանում լրագրող, 2011-ի նոյեմբերին սպանված, Ադրբեջանի՝ եվրոպական կառույցներին ինտեգրմանը խոչընդոտող իսլամական արժեքների մասին նյութ պատրաստելու համար 2007-ին դատապարտված Ռաֆիկ Թագիի սպանության առնչությամբ: Բանաձեւով Եվրախորհրդարանը խստագույնս քննադատել է սպանությունը՝ դատապարտելով նաեւ ադրբեջանական իշխանությունների անտարբեր մոտեցումը Թագիի հասցեին մահվան սպառնալիքների նկատմամբ ու կոչ արել մանրազնին ու արդյունավետ հետաքննություն իրականացնել՝ կոչ անելով նաեւ իրանական իշխանություններին՝ աջակցելու այս հարցում:**

**Բանաձեւում նաեւ մտահոգություն է հայտնվում «Սանաթ» թերթի խմբագիր Սամիր Սադագաթօղլուի նկատմամբ սպառնալիքների դեմ նրա պաշտպանության մասով, շեշտելով, որ Ադրբեջանի իշխանությունները պետք է անեն հնարավորը՝ խմբագրի անվտանգությունը երաշխավորելու համար:**

**Եվրախորհրդարանը ընդունած փաստաթղթով Ադրբեջանին կոչ է անում չկիրառել քրեական օրենսգրքի դրույթները կրոնի առնչությամբ ազատ քննարկումները խեղդելու, ճնշելու համար: Ադրբեջանից պահանջելով հարգել խոսքի ազատությունը՝ ԵԽ-ն իր բանաձեւում առանց երկակիության նշում է, որ «մտահոգություն է հայտնում խղճի բանտարկյալների իրավիճակի առնչությամբ եւ ադրբեջանական իշխանություններին կոչ անում բարի կամք դրսեւորել եւ ազատ արձակել նրանց՝ որպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ»:** Ա. Հ.

# Ավետիս Թեւանյան. «Սթիվ Ջոբսը դեռ ողջ կլիներ, եթե ժամանակին դիմեր բժիշկներին»

Apple-ի հիմնադիր Սթիվ Ջոբսի ամենամոտիկ ընկերներից մեկը՝ **Ավետիս Թեւանյանը** հայտարարել է, որ Ջոբսը հավանաբար դեռ ողջ կլիներ, եթե համառությունը նրան չխանգարեր ժամանակին դիմելու բժիշկներին: Թեւանյանի խոսքերով՝ Ջոբսը երկար ժամանակ ինքն իրեն համոզում էր, թե կկարողանա քաղցկեղից բուժվել սեփական ուժերով:



BBC-ն նշում է, որ Թեւանյանը եղել է Ջոբսի գործընկերը եւ մոտիկ ընկերը: Մինչեւ 2006 թ. Apple-ում զբաղեցրել է ծրագրային տեխնոլոգիաների գծով տնօրենի պաշտոնը: Թեւանյանի խոսքերով՝ Apple-ի հիմնադիրը շատ կասկածամիտ էր եւ չէր վստահում ուրիշի կարծիքին, անչափ ինքնավստահ էր:

Եթե առկա էր սխալվելու թեկուզ աննշան հավանականություն, Ջոբսը նախընտրում էր ոչ թե ժամանակ վատնել ճշմարտության որոնման վրա, այլ իրեն եւ շրջապատին համոզել, որ ինքն արդարացի է: Դա նրան օգնում էր առաջ մղելու սեփական նորարարական գյուտերը:

Հաճախ նրան ասում էին, թե մտահղացումը անհնար է իրականացնել: «Գիտեմ, որ անհնար է, բայց դուք այնուամենայնիվ փորձեք», պատասխանում էր Ջոբսը:

Ավետիս Թեւանյանն ասում է, որ այդ համառության շնորհիվ իրականություն են դարձել մի շարք նորարարություններ: Բայց մեկ անգամ Սթիվ Ջոբսը սխալվեց եւ դրա համար կյանքով վճարեց:

Ութ տարի առաջ, երբ բժիշկները գյուտարարի օրգանիզմում հայտնաբերեցին ենթաստամոքսային գեղձի քաղցկեղ, Ջոբսը հայտարարեց, որ ինքը վիրահատության չի ենթարկվի եւ կբուժվի ոչ ավանդական բժշկության մեթոդներով: Չնայած մերձավորների հորդորներին, նա պնդեց իրենը: Սակայն նրա ընտրած բուժումը բավականաչափ արդյունավետ չէր:

2004-ին Ջոբսը, այնուամենայնիվ, համաձայնեց վիրահատվել, բայց արդեն ուշ էր. հիվանդությունը դուրս էր եկել վերահսկողությունից: Դա եզակի դեպք էր, երբ Սթիվ Ջոբսը ընդունեց իր սխալը: «Հարկավոր էր ավելի վաղ վիրահատվել», հայտարարեց Apple-ի հիմնադիրը իր կենսագիր Ուոլթեր Այզեկսոնին տված հարցազրույցում:

# Կոկոսի յուղ՝ կարագի փոխարեն

## *Օգտագործել են «Աշտարակ կաթը», «Մարիաննան», «Անի կաթը» եւ տուգանվել*

Կաթնամթերք արտադրող ամենախոշոր՝ «Աշտարակ կաթ», «Դուստր Մարիաննա» եւ «Անի կաթ» ընկերությունները, որոնք զբաղեցնում են շուկայի մոտ 80 տոկոսը եւ համարվում են գերիշխող դիրք ունեցողներ, երեկ տուգանվեցին տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի կողմից: «Աշտարակ կաթը» տուգանվեց 50 մլն դրամի, «Անի կաթը»՝ 5 մլն դրամի, իսկ «Դուստր Մարիաննան»՝ 20 մլն դրամի չափով:

Հանձնաժողովը ապացուցված համարեց, որ կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող 3 խոշոր ընկերություններ դրսեւորել են անբարեխիղճ մրցակցություն: Ընդ որում, նախկինում նրանք մեկ անգամ զգուշացվել էին զերծ մնալ չարաշահումներից, հետեւաբար այս անգամ կիրառվեց օրենքով նախատեսված առավելագույն պատժաչափը՝ նախորդ տարվա հասույթի 1 տոկոսի չափով:

Կաթնամթերք արտադրող վերոնշյալ ընկերությունների մաքսային փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզվել է, որ նրանք ներմուծում են մեծ քանակությամբ բուսական, հիմնականում՝ կոկոսի յուղ, օգտագործելով կաթնամթերքի արտադրության մեջ: Մինչդեռ, ՀՀ կառավարության որոշմամբ, կաթնամթերքի մի շարք տեսակների արտադրության ժամանակ արգելվում է բուսական յուղի օգտագործումը, քանի որ այն բացասական ազդեցություն է ունենում մարդու առողջության վրա: Կոկոսի յուղի օգտագործումը խիստ շահավետ է, քանի որ դրա յուղայնությունը շատ ավելի բարձր է, քան կարագինը, եւ կարագից 2-3 անգամ էժան է: Նշված 3 ընկերությունները իրենց արտադրության մեջ օգտագործում են մեծ քանակով կաթի փոշի եւ կոկոսի յուղի միջոցով բարձր յուղայնության կաթնամթերք արտադրելով: Թեեւ կաթի փոշու օգտագործումը չի արգելվում, բայց արտադրողներն այդ մասին պետք է համապատասխան մակնշում կատարեն, ինչը հիմնականում բացակայել է:

Այսպիսով, ըստ հանձնաժողովի եզրակացության, կաթնամթերք արտադրող ընկերությունները, դրսեւորելով անբարեխիղճ մրցակցություն, խաբել են սպառողներին՝ հավելյալ շահույթներ կորզելով նրանցից: Բացի դրանից՝ նման վարքագծով մրցակցային լուրջ առավելություն են ստացել բարեխիղճ տնտեսվարողների նկատմամբ:

Հանձնաժողովն ուսումնասիրության ընթացքում անդրադարձել է նաեւ գնագոյացման խնդիրներին եւ պարզել, որ կաթնամթերքի թողարկման ծավալների եւ այդ արտադրության մեջ օգտագործվող ապրանքանյութական արժեքների միջեւ առկա են լուրջ անհամապատասխանություններ: Մասնավորապես, ընկերությունները կա՛մ ուռճացված են ներկայացնում արտադրանքի ինքնարժեքը, կա՛մ առկա են ստվերային շրջանառության մեծ ծավալներ: Մյուս կողմից էլ, յուղայնությունն իրականում շատ ավելի ցածր է, քան նշվում է կաթնամթերքի վրա:

Գնագոյացման ուսումնասիրության արդյունքներն ամփոփելիս՝ հանձնաժողովը եկավ այն եզրահանգման, որ կաթնամթերք արտադրողներն աշխատում են բավարար շահութաբերությամբ եւ զգուշացրեց զերծ մնալ գների անհիմն բարձրացումից՝ նշելով, որ նման քայլը կդիտարկվի որպես գների չհիմնավորված բարձրացում:

Խոսելով կայացրած որոշումների մասին՝ հանձնաժողովի նախագահ **Արտակ Շաբոյանն** ասաց, որ այն մարդիկ, որոնք կքննադատեն կամ կվիճարկեն հանձնաժողովի որոշումը, մեկնաբանություններից առաջ նախ թող ծանոթանան հանձնաժողովի նյութերին, հետո որոշեն, թե բարոյական իրավունք ունե՞ն քննադատելու հանձնաժողովի աշխատանքը:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

# «Տարվա մարդ -2011»

## *Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանը եւ «Տաշիր» ընկերության նախագահ Սամվել Կարապետյանը «Տարվա մարդ-2011» մրցանակաբաշխության դափնեկիրներ են*




**Դեկտեմբերի 14-ին Մոսկվայի «Ամենափրկիչ» տաճարում տեղի ունեցավ «Տարվա մարդ-2011» մրցանակաբաշխության հանդիսավոր արարողությունը: Միջոցառման կազմակերպիչներն էին Ռուսական կենսագրական ինստիտուտը, Տնտեսական ռազմավարության ինստիտուտը եւ Ուղղափառ գործարարների ակումբը:**

**«Տարվա մարդ-2011» ազգային մրցանակաբաշխությունը հիմնադրվել է 1993 թվականին:**

**Մրցանակաբաշխության դիպլոմով եւ արծաթե խաչով պարգեւատրվում են Ռուսաստանի Դաշնության եւ արտերկրների առավել արժանավոր քաղաքացիները, որոնք բարձրագույն ներդրում են ունեցել Ռուսաստանի զարգացման գործում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են քաղաքականությունը, կրոնը, տնտեսությունը, գիտությունը, կրթությունը, մշակույթը, բժշկությունը, փոքր նորարարական արտադրությունը:**

**«Տարվա մարդ-2011» ազգային մրցանակաբաշխության դափնեկիրներ են.**

**- Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Նորին Սրբություն Կիրիլը**
**- ՌԴ վարչապետ Վ. Պուտինը**
**- Մոսկվայի քաղաքապետ Ս. Սոբյանինը**
**- Բակուլեւի անվան սրտանոթային վիրահատության կենտրոնի տնօրեն, Ռուսաստանի բժշկական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Լ. Բոկերիան**
**- Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բարի Կամքի դեսպան Ա. Աբրահամյանը**
**- «Տաշիր» ընկերության նախագահ Ս. Կարապետյանը**
**- Տիեզերագնաց Ս. Վոլկովը**
**- Ռուսաստանի ժողովրդական արտիստ, կինոռեժիսոր Վ. Բարտոն**
**- Ուկրաինայի փոխվարչապետ Բ. Կոլեսնիկովը**
**- ՌԴ գլխավոր սանիտարական բժիշկ Գ. Օնիշենկոն**
**եւ այլք:**

# Տիգրան Լիլոյանը ստացավ մեդալը




**Հայաստանում ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի սեփ. թղթակից, մեր թերթի հեղինակներից Տիգրան Լիլոյանը երեկ ՀՀ-ում Ռուսաստանի դեսպան Վյաչեսլավ Կովալենկոյի ձեռամբ ստացավ ՌԴ նախագահի շնորհած «Բարեկամության համար» մեդալը, որի շնորհման մասին մեր թերթը գրել էր նախապես:**

# Շնորհվեցին մամուլի «Ազդարար» մրցանակները

*1-ին էջից*

«Հայոց հարցի» խմբագիր **Արմեն Ճգնավորյանը**, որին հանձնվեց մրցանակը, նշեց՝ իրենց սկզբունքներից է՝ լինել հետաքրքրական, օգտակար եւ չվնասել հասարակությանը:

**Հրաչյա Մաթեւոսյանը**, որը երեկ եւս մրցանակ ստացավ, գնահատեց այսօրվա տպագիր մամուլը: Ըստ նրա՝ այսօր ունենք խիզախ տպագիր մամուլ, եւ դիմելով՝ լրագրողներին կոչ արեց մնալ խիզախ ու արդար:

Վերլուծական լրագրության դաշտում այս տարվա ձեռքբերումը Ստեփանակերտից **Վահրամ Աթանեսյանի** հրապարակումներն են: Լեռնային Ղարաբաղի Ազգային Ժողովի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Վահրամ Աթանեսյանը նախկինում թղթակցել է «Ազատություն» ռադիոկայանին: Այսօր նրա հրապարակումները լույս են տեսնում «**Ազգ**» օրաթերթում:

«Օգտագործելով ադրբեջաներենի իր գիտելիքները՝ նա ամեն օր «սանրում է» ադրբեջանական մամուլը, վեր հանում ադրբեջանական քարոզչության՝ մեզ հետաքրքրող դրսեւորումները: Իսկ հոդվածները գրում է լրագրող-վերլուծաբանի իր մոտեցումներով», նշեց «**Ազգ**» օրաթերթի խմբագիր **Հակոբ Ավետիքյանը**:

Սփյուռքահայ մամուլ անվանակարգում մրցանակը ստացավ «Ալիք» օրաթերթը, որի 80-ամյակը լրացավ այս տարի: «Ալիքի» մրցանակը հանձնվեց Հայաստանում Իրանի դեսպանատան քաղաքական գծով 3-րդ խորհրդատու եւ մամուլի պատասխանատու **Համիկ Մուրաթխանին**, որի կարծիքով «Ալիք» թերթը կարեւոր դեր ունի հայ ու իրանցի ժողովուրդների միջեւ համագործակցությունն ապահովելու գործում: «Թերթը կարեւոր դեր ունի եւ Իրանի Իսլամական Հանրապետության համար», ավելացրեց պարոն Մուրաթխանը:

Հայ ու իրանցի լրագրողների համագործակցության փորձ արդեն կա: Հիշեցնենք, որ անցյալ տարի Թեհրանում լրատվամիջոցների ցուցահանդեսին Հայաստանը նույնպես մասնակցել է՝ հանձինս «**Ազգ**» օրաթերթի ու panarmenian.net գործակալության:

«Ազդարար» 5 մրցանակակիրները ստացան խորհրդանշական արձանիկներ ու վկայագրեր:

**Ի. Պ.**

# Նոր տնօրեններ ԳԱԱ-ում

**ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում երեկ տեղի են ունեցել ԳԱԱ-ի 4 գիտական կազմակերպությունների տնօրենների ընտրություններ:**

**Ինչպես հայտնում են ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոնից, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության եւ հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն ընտրվեց կենսաբանական գիտությունների դոկտոր Բարդուխ Գաբրիելյանը: ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց պատմական գիտությունների թեկնածու Պավել Ավետիսյանը: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Սաֆրաստյանը վերընտրվեց ՀՀ ԳԱԱ Արեւելագիտության ինստիտուտի տնօրենի պաշտոնում: ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտի տնօրենի պաշտոնում վերընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ժիրայր Վարդանյանը:**

**Բոլոր տնօրեններն ընտրվեցին միաձայն:**

# Տոնական վիկտորինա՝ Opera Mini բրաուզեր օգտագործողների համար

**Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, օգտագործելով Opera Mini բրաուզերը, ընկերության բաժանորդները կարող են մասնակցել վիկտորինային եւ շահել նորաոճ սմարթֆոն կամ պլանշետային համակարգիչ: Մասնավորապես, դեկտեմբերի 15-28-ը, Opera Mini բրաուզերի միջոցով մուտք գործելով viktorina.mts.am կայքը, «Վիվասել-ՄՏՍ»-ի բաժանորդները կարող են մասնակցել տոնական վիկտորինային եւ շահել արժեքավոր մրցանակներ՝ BlackBerry եւ HTC սմարթֆոններ, HTC Flyer պլանշետային համակարգիչներ:**

**Յուրաքանչյուր օր կտրվի մեկ հարց, որին ճիշտ պատասխանողներից 50-րդը կճանաչվի տվյալ օրվա հաղթող: Իսկ 50-ից պակաս ճիշտ պատասխան ստացվելու դեպքում, հաղթող կճանաչվի վերջին ճիշտ պատասխանող մասնակիցը:**

**Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել «111 օնլայն» պորտալի միջոցով կամ այցելել «Վիվասել-ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:**

# Ցավակցություն

Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը խորապես ցավակցում է վարչության անդամներից Սեյրան Ղարիբյանին եւ տիկնոջը՝ Նելլի Գյուլնազարյանին, վերջինիս եղբոր՝

**Ռաֆայել Գյուլնազարյանի**

վաղաժամ մահվան կապակցությամբ:

# Ցավակցություն

Արմենական-ՌԱԿ Հանրապետական վարչությունը վշտակցում է վարչության անդամներից Սուսաննա Ղազարյանին՝ իր մորաքրոջ դստեր՝

**Ռուզաննա Պետրոսյանի**

անժամանակ մահվան կապակցությամբ:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Անցուդարձ

# Քաղաքացին ինքը պետք է մտածի իր ապահով ծերության մասին

## *Նշվեց կենսաթոշակային նոր համակարգին նվիրված համաժողովում*




Առաջին կենսաթոշակային տարեկան համաժողովը երեկ տեղի ունեցավ Երեւանում, որին մասնակցեց Հայաստանի վարչապետ **Տիգրան Սարգսյանը**: Իր ելույթում նա նշեց, որ կենսաթոշակային կուտակային նոր համակարգը հնարավորություն կտա քաղաքացիներին երաշխավորելու իրենց ապահով ծերությունը: Համակարգն ունենալու է երեք բաղադրիչ՝ պետության կողմից ապահովվող բազային կենսաթոշակ, պարտադիր կուտակային բաղադրիչ (ենթադրում է քաղաքացիների աշխատավարձի 5 տոկոսի չափով վճարում, որն էլ կրկնապատկելու է պետությունը) եւ կամավոր կուտակային՝ քաղաքացիների հայեցողությամբ:

Նոր համակարգն, ըստ վարչապետի, փոխում է քաղաքացիների մտածողությունը: «Այսուհետեւ աշխատող քաղաքացին պետք է մտածի, որ ինքն է պատասխանատու իր ապագայի համար եւ կուտակումներ կատարի իր ապահով ծերության համար», ասաց Տիգրան Սարգսյանը, շարունակելով. «Մենք ստեղծում ենք ազատ մտածող մարդու միջավայր, որը պետք է կարողանա իրացնել իր ազատությունը: Սա նշանակում է, որ կենսաթոշակային բարեփոխումները առաջիկա 10 տարիների ընթացքում մեր հասարակությունում փոխելու են տնտեսական եւ ֆինանսական մտածողությունը»:

Վարչապետը միաժամանակ նշեց, որ պետությունը ստեղծելու է բարենպաստ միջավայր ներդրումային հիմնադրամների համար, որոնց նկատմամբ օրենքով սահմանվելու են խիստ չափանիշներ: Բացի դրանից, պետությունը կրկնապատկելու է այն խնայողությունները, որոնք կուտակային համակարգի միջոցով իրականացնելու են մեր քաղաքացիները:

Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը Հայաստանում ներդրվելու է 2014թ. հունվարի 1-ից: Համակարգը պարտադիր է լինելու 1974թ. հունվարի 1-ից հետո ծնված քաղաքացիների համար: Կամավոր կուտակային համակարգը գործում է 2011թ. հունվարի 1-ից:

Խոսելով այսօրվա կենսաթոշակառուների խնդիրների մասին՝ Տիգրան Սարգսյանը նշեց, որ ճգնաժամի տարիներին անգամ պետությունը ոչ միայն ամբողջությամբ կատարեց իր պարտավորությունները, այլեւ ավելացրեց թոշակները եւ սոցիալական նպաստները: Նա կրկին հիշեցրեց, որ 2012-ի հունվարի 1-ից կառավարությունը 10-ական տոկոսով բարձրացնելու է սոցիալական ապահովության նպաստներն ու կենսաթոշակները:

**Ա. Ս.**

# «Հայփոստի» նորացված բաժանմունքներ Սիսիանում, Գորիսում եւ Տաթեւում




«Հայփոստի» Սիսիանի եւ Գորիսի փոստային մասնաճյուղերի եւ Տաթեւ գյուղի փոստային բաժանմունքի վերաբացման արարողությունը տեղի ունեցավ երեկ՝ «Հայփոստի» հավատարմագրային կառավարիչ **Խուան-Պաբլո Քեչիջյանի**, տարածքային կառավարման նախարար **Արմեն Գեւորգյանի** եւ Սյունիքի մարզպետ **Սուրեն Խաչատրյանի** մասնակցությամբ:

Այս կառույցներում նորացվել են աշխատանքային ստանդարտները, փոխվել ենթակառույցները, տեղադրվել արդի ծրագրերին համապատասխանող նոր համակարգիչներ, նորացվել է մալուխային համակարգը: Խուան-Պաբլո Քեչիջյանի փոխանցմամբ, ապագայում նախատեսվում է ավելի բարձրացնել «Հայփոստի» օպերատիվությունը: Նոր ծառայությունների կազմակերպման եւ մատուցման նպատակով «Հայփոստը» բանակցություններ է վարում ֆրանսիական փոստի հետ, որի 15 աշխատակիցներ ծանոթացել են «Հայփոստի» վիճակին եւ կօգնեն ծառայությունների օպերատիվության եւ որակի բարձրացման հարցում: Ֆինանսական եւ այլ ծառայությունների կազմակերպմանը կօժանդակի իտալական փոստը: Բանակցություններ են տարվում նաեւ ռուսական փոստի հետ: Հունվարից ռուսական փոստի բաժանմունքից հնարավոր կլինի օպերատիվ պայմաններում գումար փոխանցել «Հայփոստի» բաժանմունքի: Քեչիջյանի ներկայացմամբ, «Հայփոստի» բոլոր բաժանմունքներում անվտանգությունը բարձր մակարդակի վրա է: «Տեղադրվել են ազդանշանային համակարգեր, տեսաձայնագրային սարքավորումներ, բաժանմունքներում իրականացվում է 24-ժամյա վերահսկողություն, հետեւաբար բոլորին խորհուրդ ենք տալիս ուրիշ վայրերում գողություն կատարել»: Ինչ վերաբերում է «Հայփոստի» երկու բաժանմունքներում 28 մլն դրամի գողությանը, ապա ընկերությունը փոխհատուցել է այդ գումարը:




Արմեն Գեւորգյանը, բարձր գնահատելով «Հայփոստի» կատարած աշխատանքը, շեշտեց, որ համայնքի կյանքում եւս մեկ խնդիր լուծվեց: «Հասանք նվաճումներից մեկին, որը կրում է համայնքային ծառայությունների մատուցման որակի բարձրացում: Ուրախալի է, որ «Հայփոստի» բաժանմունքների մեծամասնությունը մարզերում է, քանի որ մարզային ծառայություններն էլ պետք է ունենան այն որակը, ինչ մայրաքաղաքում եւ խոշոր քաղաքներում է»:

Մինչեւ տարեվերջ կնորացվեն Ագարակի, Քաջարանի եւ Կապանի փոստային բաժանմունքները: Մինչեւ տարեվերջ ընկերությունը նախատեսում է վերաբացված բաժանմունքների թիվը հասցնել 104-ի:

**Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Տաթեւ**

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՈՎ

# Գյումրի-Կարս տնտեսական ֆորումն ավարտվեց

Հայ եւ թուրք շուրջ երեք տասնյակ գործարարներ էին մասնակցում երեկ Շիրակի մարզկենտրոնում աշխատանքն ավարտած Գյումրի-Կարս եռօրյա երկրորդ տնտեսական ֆորումին, որի նպատակը վերջին տարիներին երկու կողմերի գործարար եւ տեղական արտադրող որոշ շրջանակի միջեւ սկիզբ առած մասնավոր շփումների ու գործակցության հետագա զարգացումն էր, դրա համար նոր հեռանկարների որոնումը:

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության, Եվրասիա համագործակցության հիմնադրամի աջակցությամբ, բրիտանական «Միջազգային տագնապ» կազմակերպության համաֆինանսավորմամբ կազմակերպված միջոցառման օրերին երկու կողմերի ներկայացուցիչներից ստեղծված աշխատանքային խմբերն ըստ մասնագիտական ոլորտների այցելել են Շիրակի եւ հայաստանյան այլ պարագործական, գինեգործական, մեղվաբուծական ընկերություններ ու տնտեսություններ, ծանոթացել արտադրատեսակներին ու տեխնոլոգիական գործընթացներին, զբոսաշրջության ոլորտի զարգացման հնարավորություններին ու խնդիրներին: Ամփոփիչ հանդիպման ժամանակ խմբերի ներկայացուցիչներն իրենց տպավորություններն ու նկատառումները հայտնեցին այդ ոլորտներում փորձի փոխանակման եւ գործարար համագործակցության հնարավորությունների վերաբերյալ: Թուրք գործարարները մասնավորապես նշեցին Հայաստանում գինեգործության մշակույթի զարգացման բավական բարձր մակարդակը, միեւնույն ժամանակ տեխնոլոգիական առումով կարեւորելով գինի հանելուց հետո գինենյութի սննդային մնացուկների օգտագործումը տարբեր նպատակներով, ինչը մեզ մոտ չեն տեսել: Նշվեց նաեւ իրենց մոտ խաղողի կորիզից ստացվող յուղի օգտակարությունը, որը որպես հակաօքսիդանտներ պարունակող՝ ունի նաեւ բուժական հատկություններ:

Այս եւ այլ ոլորտների վերաբերյալ եղան ճանաչողական փոխայցելությունների, տեխնոլոգիական ծրագրերի փոխանակման եւ համատեղ աշխատանքը շարունակելու տարբեր այլ առաջարկություններ, արտահայտվեցին հետաքրքրական գաղափարներ՝ ուղղված առեւտրի եւ զբոսաշրջության ոլորտներում համագործակցությանը:

**Գ. Ս.**

# Գործարարների ֆորում Տավուշում

**Դեկտեմբերի 20-ին Իջեւանում մեկնարկելու է Տավուշի մարզի գործարարների (գործատուների) 1-ին ֆորումը: Ֆորումին մասնակցելու են Տավուշից շուրջ 300 գործարար եւ անհատ ձեռնարկատեր, 8 բանկերի մարզում գործող 18 մասնաճյուղերի կառավարիչներ, ապահովագրական եւ վարկային կազմակերպությունների Տավուշի մասնաճյուղերի ղեկավարներ, հարկային տեսչության պետեր, մաքսակետերի պետեր, խոշոր համայնքների ղեկավարներ, Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների (գործատուների) միության նախագահ Արսեն Ղազարյանը, գործարարներ եւ պատգամավորներ:**

# Մինչեւ թուրք պատգամավորները հասնեն Փարիզ՝ Էրդողանը նամակ է գրել Սարկոզիին

*1-ին էջից*

**Էրդողանը՝ Սարկոզիի հայաստանյան հայտարարությունների ֆոնին զուտ ձեւական ներկայացող նամակում հիշեցրել է, որ 2006-ին էլ նմանօրինակ նախագիծ հաստատվեց ֆրանսիական Ազգային ժողովի խորհից, բայց չհասցվեց Սենատ:**

**Նշելով, թե Ֆրանսիայի ներկայիս քայլերը «ապշեցրել են» Թուրքիային, Էրդողանն իր ուղերձում տեղեկացրել է, որ Թուրքիան մեծ ուշադրությամբ է հետեւում օրինագծին առնչվող ջանքերին: «Այս նախագիծն ուղղակիորեն նշանակետում ունի Թուրքիայի հանրապետության պետությանը, թուրք ժողովրդին եւ Ֆրանսիայում թուրք համայնքին ու դիտարկվում է որպես թշնամանք...», նամակում նշել է Թուրքիայի վարչապետը:**

**Ֆրանսիայի Սենատում օրինագծի ընդունումը դիտարկելով որպես Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքերին որեւէ կերպ չնպաստող՝ Էրդողանը ավելացնում է. «Այդպիսի քայլերը խոչընդոտ են հարուցում ճշմարտությունը բացահայտելու համար», գրել է Էրդողանն ու կարծիք հայտնել, թե թուրք-ֆրանսիական հարաբերությունները չպետք է կախված լինեն երրորդ կողմից:**

**Տվյալ դեպքում Թուրքիայի վարչապետը նեղմիտ մոտեցում է ցուցաբերում, քանի որ ճիշտ նույն տրամաբանությամբ՝ հայ-ֆրանսիական հարաբերությունները չպետք է կախված լինեն երրորդ կողմից՝ Թուրքիայից:**

# Յունիբանկը նոր մասնաճյուղ է բացել Դավիթաշենում

Յունիբանկը, հավատարիմ մնալով Երեւանի բոլոր շրջաններում եւ մարզերում ներկայացված լինելու եւ բանկային սպասարկումը քաղաքացիների համար առավել հարմարավետ դարձնելու ռազմավարությանը, շարունակում է մասնաճյուղային ցանցի ընդլայնումը: Ս.թ. դեկտեմբերի 14-ին ՀՀ Կենտրոնական բանկը գրանցել է Յունիբանկի «Դավիթաշեն» նոր մասնաճյուղը, որի հասցեն է՝ ք.Երեւան, Տ.Պետրոսյան 24/3: Նախատեսվում է, որ մինչեւ տարեվերջ մասնաճյուղը կսկսի հաճախորդների սպասարկման գործընթացը, այդ թվում՝ ավանդների ընդունում, վարկավորում, բանկային քարտերի տրամադրում եւ սպասարկում, UNISTREAM դրամական փոխանցումների իրականացում, կոմունալ վճարումների ընդունում:

Դավիթաշեն մասնաճյուղի բացմամբ Յունիբանկի սպասարկման կետերի ընդհանուր քանակը կազմեց 38: Բանկը 18 մասնաճյուղ ունի Երեւանում եւ 20 մասնաճյուղ՝ մարզերում ու ԼՂՀ-ում: Մոսկվայում գործում է Յունիբանկի ներկայացուցչությունը: Մինչեւ տարեվերջ նախատեսվում է նոր մասնաճյուղ բացել նաեւ Վանաձոր քաղաքում: Ներկայումս մասնաճյուղերի քանակով Յունիբանկը ՀՀ բանկերի առաջին հնգյակում է:

# Հայրենասէր գործիչն ու բարերարը՝ Կարօ Յարութիւնեան

*Մահուան քառասունքին առթիւ*

Միջին Արեւելքի տարածքին ու յատկապէս Սուրիա-Լիբանանի մէջ, յեղեռնի անմիջական յաջորդող տարիներուն, հրապարակ եկաւ մաքրամաքուր հայրենասիրութեամբ սերունդ մը, որուն յանձնուեցաւ ազգային պատասխանատուութիւնը. անոնց մէկ աչքը սեւեռուած մնաց հայրենիքին ու անոր սրբութիւններուն, իսկ միւսը՝ անապատի աւազներէն վերապրած ժողովուրդին կրթական, մշակութային հարստութիւններուն:

Անոնցմէ շատեր՝ արդէն յաջողած անձնաւորութիւն դարձած իրենց ասպարէզներուն մէջ, բոլորանուէր մասնակցութիւն բերին սփիւռքահայ կեանքէն ներս ու ժամանակի թաւալքին դէմ պայքարելով ուզեցին ամենակարճ ժամանակի մէջ շատ գործ տեսնել, որպէսզի կարենային ամբողջացած տեսնել իրենց երազը, հասնելու նոր հորիզոններու եւ իրենց յաջորդող սերունդին կարենալ յանձնելու արժանաւոր ընկերային, բարօք ընտանեկան ու յառաջադէմ ազգային կեանք մը:

Այդ սերունդին ներկայացուցիչներէն եղաւ, անկասկած, Կարօ (Կարապետ) Յարութիւնեանը:

Գիտցաւ հետապնդել ամէ՛ն գործ առանց վհատելու, առանց տատամսելու, առանց դոյզն յուսահատութեան: Ինչպէս իր անձնական առեւտրական գործին ան հասաւ արագօրէն, յաճախ նոյն խնդրի համար քանի մը անգամներ ստիպողաբար մեկնելով հեռաւոր Ճափոն, այնպէս ալ իրեն վստահուած ազգային պատասխանատուութիւններուն, ան հետամուտ դարձաւ ժամանակին կատարելու իրեն վստահուած յանձնարարութիւնները:

Այս որպէս նախաբան. այժմ արձանագրենք, որ Կարապետ, ինչպէս սովոր էինք ըսել՝ Կարօն ծնած է Հալէպ, 1933-ին, աթթար Կարապետ եւ Տուտու (Մուրատեան) այնթապցի ընտանիքի յարկէն ներս, ըլլալով 5-րդ զաւակը: Դժբախտութիւնը կ՚ունենայ 6 տարեկանին կորսնցնելու մայրը:

Հալէպի այնթապցիներու վարժարանը՝ Կրթասիրացը յաճախելէ ետք կը շարունակէ իր ուսումն ու կ՚աւարտէ Քարէն Եփփէ ճեմարանը, որմէ յետոյ կը սկսի աշխատիլ իր հօրը խանութը: Շուտով, արդէն 18 տարեկան, կը ստանձնէ հօր գործին պատասխանատուութիւնը ու զայն տարածելով նախ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, այնուհետեւ զայն կը ծաւալէ դէպի հեռաւոր հորիզոններ՝ հասնելով մինչեւ համաշխարհային շուկաներ:

Պարոն Կ. Յարութիւնեան 1959-ին, կ՚ամուսնանայ բարեհամբաւ Գունտաքճեան ընտանիքի դստեր՝ Քնարին հետ, ՀԲԸՄ-ի Պէյրութի Դարուհի Յակոբեան աղջկանց վարժարանի շրջանաւարտ եւ ՌԱԿ-ի զանազան յանձնախումբերու մէջ գործունեայ ընկերուհիին հետ: Կը բախտաւորուին երեք մանչ զաւակներով՝ Սարօ, Կոմիտաս եւ Նարեկ, որոնք իրենց բարձրագոյն կրթութիւնը ստանալէ ետք զանազան համալսարաններէ, կը միանան Կարոյին առեւտրական գործի մեծ ցանցին եւ այսօր կը տնօրինեն «Հարքօ» էլեքտրոնիկ գործիքներու ընկերութիւնը, որուն կեդրոնավայրն է Նիւ Ճըրզիի Էնգլվուդ քաղաքը: Կարապետ կը բախտաւորուի վեց թոռնիկներով, որոնք բոլորն ալ շնորհալի՝ մաս կը կազմեն տեղւոյն մշակութային խումբերուն:

Յիշենք հոս նաեւ, որ տէր եւ տիկին Կարապետ եւ Քնար Յարութիւնեաններ եղած են անյագ ընթերցասէր զոյգ մը եւ յաճախ, որպէս մեկենաս, քաջալերած են երիտասարդ մեր գրողները:

Ան հաւատացեալ քրիստոնեայ մը եղած է եւ տան մթնոլորտը քրիստոնեական հաւատքով ալ ջերմացուցած: Կարօն ծառայած է Սուրբ Խորանին եւ մասնակցած՝ Հայաստանեայց եկեղեցւոյ զանազան մարմիններու մէջ Հալէպի, Դամասկոսի թէ Պէյրութի համայնքներէն ներս:

Լիբանանի քաղաքացիական պատերազմին Կարապետ կ՚ընտրուի Թէքէեան մշակութային միութեան հիմնադիրներու մարմնի անդամ: Անոր մասնակցութիւնը կ՚ըլլայ օրհնաբեր: Պատերազմի ամենէն տխուր օրերուն, նիւթական ծանր պարտաւորութիւններու տակ Պէյրութի Վահան Թէքէեան վարժարանը ստիպուած պիտի ըլլար փակել իր դռները: Ոչ մէկ եկամուտ որեւէ աղբիւրէ: Պարտուած էր նաեւ Թէքէեան կեդրոնը, ուրկէ եւս ցամքած էին բոլոր եկամուտները: Նախախնամութիւնը կարծէք զինք բերած ըլլար Թէքէեանի այդ վերին մարմնին:

Պարոն Յարութիւնեան տեսլապաշտ ու գործնապաշտ ղեկավարը եղաւ ԹՄՄ-ի, որ նախաձեռնեց կազմակերպել Մի. Նահանգներու եւ յատկապէս Նիւ Եորքի մէջ լիբանանահայ յայտնի գեղանկարիչ Փոլ Կիրակոսեանի գործերուն ցուցահանդէսը: 1987-ի մարտ 27-29 շաբաթավերջին ցուցադրուեցան նկարիչին 70է աւելի իւղաներկ պաստառները առաջնորդանիստ Ս. Վարդան տաճարի Գավուքճեան սրահին մէջ: Բացման յաջորդ օրը՝ տեղի ունեցաւ նաեւ բացումը Նիւ Եորքի ԹՄՄ-ի սեփական Եուսուֆեան կեդրոնին:



Նոյն տարուան յունուարին այցելաբար Նիւ Եորք եկած էր Կարօն եւ ունեցած հանդիպում մը իմ հետ. այդ օրերուն ընկեր Ներսէս Ինկիլիզեանն էր ատենապետը Մեծագոյն Նիւ Եորքի Թէքէեանի մասնաճիւղին: Ես գանձապահն էի: Վարչութեամբ մտիկ ըրինք Կարօն. նկարագրեց Պէյրութի Վահան Թէքէեան վարժարանին տխուր վիճակը: Միջին Արեւելքէն ու յատկապէս այս ափերը սկսած էին արտագաղթել լիբանանահայեր, որոնք ծանօթ էին Փոլ Կիրակոսեանի արուեստին. ան արդէն ունէր իր երկրպագուները: Խնդրեց, որ զարնան կազմակերպեմ այդ ցուցահանդէսը: Պայման դրի, որ անպայմանօրէն Փոլն ալ ներկայ գտնուելու էր: Արկածի հետեւանքով ոտքին մէկը հասուած էր եւ նման երկար ճամբորդութիւն մը արդեօք յանձն պիտի առնէ՞ր ընդունիլ:

Ամերիկայի տարածքին ցուցահանդէսներ կազմակերպելու պատասխանատուութիւնը ինծի յանձնուեցաւ: Ընկերներ Երուանդ Ազատեանը Տիթրոյթի եւ Տիգրան Էքիզեանը Լոս Անջելըսի համար յանձն առին կազմակերպել նոյնօրինակ ցուցահանդէսներ:

Ցուցահանդէսէն երեք շաբաթ առաջ հասան պաստառները: Աւելի ուշ եկաւ նաեւ Փոլը: Արդէն մթնոլորտը պատրաստ էր. Կարօն վստահ էր, որ կատարեալ յաջողութեամբ պիտի պսակուէր ցուցահանդէսը: Առեւտրականի քիթը հոտ կ՚առնէր... Չսխալեցաւ, զարմանալի պատկեր մը պարզուեցաւ այդ երեկոյ. աւելի քան քսան կտորներով ցուցահանդէսը մօտ քառասուն հազար դոլարի հասոյթ մը ապահովեց Թէքէեանին: Շաբաթ մը ետք ստացանք ուրիշ 40 հազարի չէք մը Լոս Անջելըսէն եւ ինը հազարի չէք մը Տիթրոյթէն: 90 հազար դոլարի եկամուտ մը, որուն 20 հազար պիտի տրուէր վարպետին, 10 հազարը ճանապարհածախսի եւ պաստառներու փոխադրութեանց ու մնացածը՝ Վահան Թէքէեան վարժարանին:

Դրամը հասաւ Պէյրութ, ուսուցիչներու վճարումները կատարուեցան, պարտքերը փակուեցան ու փառք տիրոջ, մեր դպրոցին դռները բաց պահուեցան, այդ օրերու 700-ի հասնող աշակերտութեան առաջ:

Նմանօրինակ նուիրահաւաքներ ան կազմակերպեց նաեւ Լիբանանի, Կիպրոսի, Սուրիոյ, Յորդանանի զանազան հայաշատ քաղաքներու մէջ:

Ան գանձապահն էր նաեւ ՀԲԸՄ-ի Լիբանանի շրջանակի Կրթական յանձնաժողովին, որուն միջոցով օգտակար եղաւ ուսումնատենչ մեր աշակերտներուն եւ համալսարանական ուսանողութեան: Ուսումը նկատած է հիմնաքարը ապագայի մեր երիտասարդութեան, որ պիտի պատրաստուի ստանձնել յաւելեալ պատասխանատուութիւններ ազգային մեր կեանքէն ներս: Շատ անգամ ան նուիրած է առանց յայտարարելու իր անունը: Լա՛ւ գիտեմ, որ ան, խորհրդապահաբար, նիւթապէս հասած է զանազան կարեւոր ձեռնարկներու:

2002 տարին կ՚ ըլլայ տխուր որքան Յարութիւնեան ընտանիքին համար, նո՛յնքան նաեւ՝ ՌԱԿ-ԹՄՄ մեծ ընտանիքին: Կը կորսնցնենք ընկերուհի Քնարը, որ զոհ կ՚ երթայ անողոք հիւանդութեան: Իր սիրեցեալ կնոջ յիշատակին Կարօն ամբողջ գիւղ մը կը կառուցէ Քնարաւան անունով, Քարվաճառի ազատագրուած շրջանին մէջ, եւ կը տեղաւորէ 20 հայ ընտանիքներ: Գիւղը կը լրացնէ բոլոր պայմանները՝ ջուր, էլեքտրականութիւն, դպրոց, մշակութային տուն, ճամբայ:

Ու իրենց ծնողաց բարի օրինակին հետեւեցան երեք եղբայրները: Իւրաքանչիւրն անոնց՝ ազգային տարբեր ճամբով. 2003-ին Նարեկի նախաձեռնութեամբ եւ իր հօր օրհնութեամբ հիմնուեցաւ Նարեկացի արուեստի միութիւնը Հայաստանի եւ Արցախի մէջ, Կոմիտասը՝ բժշկա-առողջապահական մարզէն ներս կը տանի լայն աշխատանք, իսկ Սարօն ԹՄՄ-ի եւ ՀԲԸՄ-ի ճանապարհով կը մասնակից մեր ազգային կեանքին:

Յարութիւնեաններ ո՛չ ըսել չեն գիտեր... միայն գիտեն տալ երեք բան՝ թանկագին ժամանակը, աստուածատուր շնորհն ու ունեցած նիւթական միջոցները: Արդէն ի՞նչ կարելի է սպասել աւելին հանրային գործիչէ մը: Ուրիշներէն եթէ մէ՛կը այդ երեքէն ստանանք՝ երախտապարտ կ՚ըլլանք...

Կարոյին բարի յիշատակը դեկտեմբեր 3-ին նշուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան արարողութեամբ մը Նիւ Ճըրզիի Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցւոյ մէջ, ուր հաւաքուած էին մեր լայն շրջանակի ազգայինները:

Կարօ Յարութիւնեան, կրթանուէր մեր բարեկամը, պիտի մնայ Թէքէեան մեծ ընտանիքին երախտաւորներէն, որ հասաւ ճիշդ պահուն՝ ճիշդ նպատակի: Թող անոր բարի օրինակը ըլլայ վարակիչ մեր նոր սերունդներուն համար:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

**ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ**
**Նիւ Ճըրզի**



# Ջուրը հիշողություն ունի

*Մեր ջուրը դարձել է վատ հիշողություն կրող*

Գիտնականները տեւական ժամանակ ուսումնասիրել են ջրի կառուցվածքը եւ եկել եզրակացության, որ ջուրը որոշակի տեղեկատվություն կրող է: Ջուրը, քիմիական կազմը չփոխելով, բյուրեղային դասավորվածության միկրոսկոպիկ պատկերներ է ձեւավորում՝ տրամադրություն, տեղեկություն, միտք եւ հիշողություն փոխանցելով: Ուսումնասիրությունները համոզում են, որ ջուրը համակարգչի նման խտացրել է հազարամյակների տեղեկատվությունը՝ այդպիսով դառնալով տվյալ տարածքում տեղի ունեցող գործընթացներն իր բյուրեղներում արձանագրողը: Կգա այն ժամանակը, որ ուսումնասիրելով ջրի այդ հատկությունները գիտնականները կկարողանան վերականգնել տվյալ տարածքում տեղի ունեցող բնության գործընթացներն ու անգամ այնտեղ գործող ազգերի բնութագիրը: Մեր օրգանիզմը 75 տոկոսով կազմված է ջրից, ուստի զարմանալի չէ, որ մենք, բնակվելով այս հողի վրա եւ խմելով այս տարածքի ջուրը, մեր գեներում կրում ենք ողջ ինֆորմացիան, որ հազարամյակներով փոխանցել է ջուրը մեր օրգանիզմին: Ավելին՝ մարդու օրգանիզմի ներսի ջուրը իր կառուցվածքով համընկնում է իր ծննդավայրի ջրի կառուցվածքին, այնպես որ «հայրենիք» բառը նաեւ ֆիզիոլոգիական իմաստ ունի: Իսկ եթե մեր խմածը մեռած (վատ ինֆորմացիա կրող) ջուր է, ապա այսպես մենք բթանում ենք, կորցնում հայրենիքի զգացողությունը եւ հեշտորեն հեռանում այն վայրից, որի ջուրը նույնական է մեր օրգանիզմի ջրին: Սակայն նույն տարածքի ջուրը կրող մարդկանց մեջ նույնիսկ հեռակապ է գործում՝ բնությունն այդպես է կարգավորում երկրի հետ կապվածությունը՝ մեր մեջ աղմկող ջրի հիշողությամբ:

Գիտնականներին հետաքրքրում է շատ բան, եւ այս իմաստով ստացվող արդյունքները գերազանցում են անգամ նրանց սպասելիքի սահմանը: Ասենք՝ հոգեւոր կամ դասական երաժշտություն «լսած» ջրի բյուրեղները գեղեցիկ եւ սիմետրիկ են, ծանր ռոքը ջրի բյուրեղները դարձնում է անկանոն եւ տգեղ: Կամ՝ լեռնային մաքուր աղբյուրներից վերցված ջրի բյուրեղները պարզապես կատարյալ են, իսկ նավթ պարունակող տարածքի ջրի բյուրեղը ոչ մի կանոնավորություն չունի եւ աղճատված է: Կատարյալ բյուրեղներով ջուրը խմած մարդու օրգանիզմն անմիջապես ակտիվանում է, հաղթահարում հիվանդությունը, ագրեսիան, դեպրեսիան, իսկ աղճատված բյուրեղներով ջուրը հիվանդ օրգանիզմին ավելի վատ վիճակի է տանում:

Ջրի մասին այս գիտելիքները, որի հետքին ընկել են գիտնականները, եւ նրանց ուսումնասիրությունները դեռ շատ «ջրային» գաղտնիքներ են բացելու, հավանաբար իմացել են մեր նախնիները, այլապես այդ գիտելիքները տարբեր ձեւերով չէին պահպանվի: Ասենք՝ հեքիաթներում հերոսը միշտ գնում է անմահական ջրի հետեւից, որը բերելուց հետո հիվանդը լավանում է: Կամ՝արդյոք այս գիտելիքը չի՞ թաքնված սուրբ ջրով բուժելու ավանդույթի մեջ: Գիտնականներն ասում են, որ լավ կառուցվածք ունի բնական հոսող ջուրը, իսկ խողովակաշարով անցնող եւ մեր տներում խողովակից լցվող ջուրն արդեն դեֆորմացված է եւ վատ կառուցվածք կրող է: Հիմա պատկերացրեք, թե ի՞նչ ավերներ է գործել մարդն ամբողջ աշխարհում՝ իր կենսագործունեությամբ աղտոտելով ջուրը եւ խաթարելով նրա կառուցվածքը: Ողջ աշխարհում, փաստորեն, գերակշռում է վատ հիշողություն ունեցող ջուրը, որը խախտում է մարդու օրգանիզմի ներդաշնակությունը, ավելացնում հիվանդությունները:

Իսկ հիմա այս բոլորին նայենք հայերիս պատուհանից: Վերջերս հերթական անգամ ընդունվեց շրջակա միջավայրի աղտոտվածության մեծացմանը նպաստող մի օրենք, հերթականը նրանցից, որոնք ընդլայնում են Հայաստանի հանքարդյունաբերողների գործունեության ծավալները, իսկ այդ գործունեության ողջ աղբը պետք է պարտակի մեր բազմաչարչար ջուրը: Ինչպես ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանն է պատկերավոր ասում՝ Հայաստանը դարձել է մի մեծ հանքավայր: Մենք այնքան էլ լավ չգիտենք բնության օրենքները, մենք չենք խորանում գիտության նոր ուսումնասիրությունների մեջ, մեզ հետաքրքրում է այսրոպեական շահույթը, այն էլ ոչ թե շատերի՝ ազգի մեծ մասի, այլ մի քանիսի համար, որոնց շահույթն ուղիղ համեմատական է ողջ ազգի նկարագիրն ունեցող ջրի աղտոտման աստիճանին: Մենք չգիտենք՝ մեր ժամանակի մեջ վատ հիշողություն ձեռք բերած եւ աղտոտված ջուրն ի՞նչ ավեր է գործելու հայոց գենում եւ ի՞նչ հիշողություն է փոխանցելու: Սակայն եթե նկատի ունենանք մեզ համար անսովոր հիվանդությունների տարածումը այսօր նաեւ Հայաստանում, հիվանդանոցներում մայրանալ ցանկացող մեր կանանց հերթերը արհեստական բեղմնավորման համար, եթե նկատի ունենանք արտագաղթի մեծ ծավալն ու ընդհանուր դեպրեսիոն տրամադրությունը, ապա կհասկանանք, որ աշխարհի մեր անկյունում եւս մեր ջուրն արդեն դարձել է վատ հիշողություն կրող: Ու երեւի կարիք ունենք գիտնականների, մասնագետների հիմնավորված բացատրությունների, որոնց կլսեն այս երկրի ճակատագիրն ուղղորդողները:

**ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ**

# Ադրբեջանը վախենում է Բաքվի վրա հարձակումներից

Ադրբեջանական ռազմատենչ հռետորաբանությունը մեկ փորձագետի ու վերլուծաբանի, էլ չասած՝ միջազգային համապատասխան կառույցների կողմից չէ, որ սնանկ է որակվում՝ ելնելով ադրբեջանական բանակում տիրող անմխիթար իրավիճակից: Ադրբեջանական իշխանությունները, չնայած ռազմատենչության դրսեւորումների իրապես բացասական ազդեցությանը ոչ միայն երկրի ներսում, այլեւ դրսում, հիմնականում այդ հռետորաբանության լսարան չեն կարող գտնել այլ բան, քան ներքին լսարանը:

Սակայն երբ տարբեր ատյաններում նույն ադրբեջանական իշխանությունները դիրքորոշում եւ մոտեցում են արտահայտում, առավել հաճախ դրանցում զուտ ռազմական լուծման գնալու պատրաստակամությունը քիչ է: Դրա փոխարեն, ամեն դեպքի համար, ադրբեջանցիները չեն մոռանում հիշատակել, թե դեռեւս կողմ են խաղաղ բանակցություններով ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը: Ինչպես ասում են, ասել ու անել՝ տարբեր բաներ են:

Պատերազմից ու Արցախը գրավելուց խոսող Ադրբեջանի պարագայում մի տեսակ անհեթեթ է հնչում տեղեկությունը, թե այս երկիրը դիմել է ՅՈՒՆԵՍԿՕ-ին՝ «ռազմական հակամարտության դեպքում Բաքվում գտնվող հուշարձաններից երկուսի համար «ուժեղացված պաշտպանության» կարգավիճակի» խնդրանքով: Խոսքը Բաքվի հին հատվածում գտնվող բավականին հայտնի «Կըզ Քալասը» (Կույսի աշտարակ) հուշարձանի եւ ընդհանրապես «Իչերի Շեհիր»՝ Ներքին քաղաք կոչվող առափնյա հատվածի, ինչպես նաեւ Գոբիստանի ժայռապատկերների մշակութային լանդշաֆտի մասին է:

Թե նշված երկու երեւույթներն էլ ո՞ւմ ժառանգության կամ արարման արդյունք են, եւ թե ինչի՞ հիման վրա կամ ի՞նչ անվան տակ են հայտնվել ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ համաշխարհային ժառանգության օբյեկտների ցանկում, հետաքրքրական կարող է լինել: Սակայն առավել հետաքրքրական է, թե ինչ ռազմական հակամարտության դեպքի համար է Ադրբեջանը «ապահովագրում» Բաքվում, ճշտենք՝ Բաքվում գտնվող մշակութային օբյեկտները:

Ակնհայտ է, որ այսօրինակ քայլը նախ քարոզչական նպատակ ունի, աշխարհին եւս մեկ անգամ որպես ադրբեջանական մշակույթ ներկայացնելու, ասենք, նույն Կույսի աշտարակը, որ ոչ միայն առնչություն չունի ադրբեջանական իրողության հետ, այլեւ իր ստեղծման ժամանակաշրջանի անհայտության առումով հաստատապես առավել հին է, քան ադրբեջանական ներկայացվող ժամանակները: Եվ սա այն հիմնավորմամբ, որ հատուկ պաշտպանության կարգավիճակ ստանալու համար երեք պայման պետք է բավարարվի. Հուշարձանը պետք է ունենա համամարդկային նշանակություն, պաշտպանված լինի տեղական իշխանությունների կողմից եւ չօգտագործվի ռազմական նպատակներով:

Քարոզչության հետ մեկտեղ՝ թե որտեղից է Ադրբեջանը ռազմական հակամարտություն սպասում, այն էլ՝ Բաքվի ուղղությամբ, զավեշտի թեմա կարող է դառնալ աշխարհին ու իրենք իրենց սեփական «գերազանցությունը» ապացուցելու մոլուցքով տարված այդ երկրի պարագայում, հատկապես երբ Բաքվից ոչ շատ հեռու մի հակամարտություն այդպես էլ Ադրբեջանն ի զորու չէ լուծել՝ աշխարհում տիրող իրավունքներն ու սկզբունքներն ընդունելի անընդունակ կեցվածքով: Ընդ որում, հակամարտության, բառի լայն իմաստով, պոտենցիալ աղբյուր էլ, ըստ ադրբեջանա-իրանական հարաբերություններում տարբեր մեղադրանքների ու «փոխհրաձգության», կարող է գալ նաեւ Ադրբեջանի հարավից, սակայն թուրն աջուձախ ճոճող այս երկրի մայրաքաղաքին սպառնացող վտանգներ, որեւէ պարագայում, չեն նկատվում:

Իսկ գուցե այսօրինակ քայլը նաեւ սեփական եղած-չեղած ընդդիմության կողմից քայլերի թատերաբեմ Հին քաղաքը չդարձնելու մղո՞ւմն է: Դա էլ իրենք գիտեն:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Այդ «հարուստ» Ադրբեջանը

Ինչ հիմարություն ասես, որ Բաքվում իրենց թույլ չեն տալիս: Միլլի մեջլիսի պատգամավոր Զահիդ Օրուջեւն, օրինակ, առաջարկել է, որ 2012 թ.-ից Ադրբեջանի պետական բյուջեում «առանձին տողով հատկացումներ արվեն Լեռնային Ղարաբաղին»: Նա, իհարկե, ավելացրել է, որ «այդ փողերը չեն ծախսվի, փոխարենը ԼՂ-ում ապրող հայերը կիմանզվեն, թե որքան հարուստ է Ադրբեջանը եւ...»: Պատկերացնո՞ւմ եք... Երեւի Զահիդ Օրուջեւը «չախսեյ-վախսեյի» օրը չափից ավելի է իրեն գանակոծել, արյուն կորցրել եւ ընկել մտավոր «կոմայի» մեջ: Հարկ է, որ իրեն խնայի: Եվ քաղցր թեյ խմի:

Ի հեճուկս նրա պոռոտախոսության՝ Ադրբեջանի պետական մարմինները սեւով սպիտակի վրա գրված՝ աղյուսակի տեսքով, հրապարակել են այդ «չափազանց հարուստ երկրի» բյուջետային ոլորտի աշխատավարձերը: Ըստ այդմ, «տնտեսական բում ապրող» երկրում գալիք տարվա պետական բյուջեով նախատեսված է, ներառյալ՝ «նորին գերազանցություն» Իլհամ Ալիեւի կարգադրությամբ սահմանված հավելումները, որ «պետական ծառայողների 1-ին կարգի» աշխատավարձը կկազմի ... 93 մանաթ կամ ոչ ավելի, քան 100-110 դոլար: Ընդամենը:

Սա, երեւի, պետական ծառայության անցնող ադրբեջանցի երիտասարդի «մեկնարկային» եկամուտն է, որ, ինչպես թվերն ու իրականությունն են ապացուցում, որոշակիորեն ավելի քիչ է, քան Արցախում է: Ընդ որում՝ նույն պետական ծառայողի համար: Եվ այդպես՝ շարունակ: Գիտության բնագավառում, մասնավորապես, Ադրբեջանում 19-րդ կարգի՝ «առաստաղային» աշխատավարձն ավելին չէ, քան ստանում է Արցախի պետական համալսարանի պրոֆեսորը:

Նույն պատկերն է նաեւ նվազագույն աշխատավարձի եւ թոշակների պարագայում: Ստացվում է, որ «հարուստ» Ադրբեջանի առասպելը սահմանափակվում է միայն նավթագազային հումքի արտահանությունից որոշակի մարդկանց եկամուտների աճով: Ինչպես օրինակ՝ պետական կոչվող նավթային ընկերության դեպքում, որը, չիմանալով ինչպես ծախսել անաշխատ գումարները, Բաքվի արվարձաններից մեկում զանգվածաբար քանդում է քաղաքացիների սեփական տները: Եվ փոխհատուցում էլ չի վճարում, քանի որ «տարածքը պատկանում է» իրեն:

Քարոզչությամբ, իհարկե, Զահիդ Օրուջեւն ու նմանները շատ բան կարող են ասել: Բայց փաստերն, ինչպես ասում են, անողոք են: Եվ ցույց են տալիս, որ, ի հակակշիռ տարփողվող առասպելի, Ադրբեջանում ամենեւին էլ ավելի լավ չեն ապրում, քան հարեւան երկրներում: Մի բան էլ ավելի. Արցախում մարդիկ ունեն հեռանկարի գիտակցում: Ինչպես նաեւ՝ որոշումներ ընդունելու իրավունք: Ի տարբերություն հարեւան երկրի, որտեղ քաղաքացիները պարզապես «հոտ» են: Համենայն դեպս, իշխող վերնախավը նրանց այդպես է «գնահատում»:

Դա է թերեւս պատճառը, որ Զահիդ Օրուջեւը փորձում է «հոտին» ներշնչել, թե պետական բյուջեով Լեռնային Ղարաբաղին «հատկացվող գումարները կարող են այնտեղ ապրող մարդկանց դրդել ապստամբության»: Իրականում, մինչդեռ, ապստամբությամբ հղի է թերեւս ադրբեջանական հանրությունը: Քանի որ այդ երկրում նախագահի պաշտոնական աշխատավարձը 15 000 մանաթ է:

Հեռու գնալ պետք չէ. ԼՂՀ նախագահն ստանում է ուսուցչի եւ բժշկի դրույքաչափն ընդամենը 3 անգամ գերազանցող աշխատավարձ: Ադրբեջանի դեպքում տարբերությունը 15 եւ ավելի անգամ է: Չհաշված պետական նավթային ընկերության եւ Հեյդար Ալիեւի հիմնադրամի, ինչպես նաեւ ստվերային այն բոլոր գումարները, որ վերահսկում են Իլհամ Ալիեւը, Մեհրիբան եւ Լեյլա Ալիեւաները: Այսինքն՝ իշխող կլանը:

-А народ безмолвствует,- ստիպված ենք եւս մեկ անգամ մեջբերել ռուս դասականին: Եվ ավելացնել հայ դասականի ընդհանրացումը. «Սարսափելի է, երբ ժողովուրդը լռում է»: Դա երեւի լռություն է փոթորկից առաջ: Քանի որ մի ժողովուրդ, ինչքան էլ նրան «հոտի» տեղ դնեն, անվերջ չի լռում: Երբեմն գժվում են նաեւ «ոչխարները»: Երբ «հովիվն» այդպես էլ չի «գտնում ջրելու տեղը»: Պաշտոնական տվյալները վկայում են, որ Ադրբեջանի իշխող կլանը մտադիր չէ «անապատում օազիս փնտրել»: Ուրեմն մնում է, որ «ոչխարներն ապստամբեն»:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**
**Ստեփանակերտ**

ՀԱՎԱՍԱՐԱԿՇԻՌ ՄՈՏԵՑՈՒՄ

# Սիրիային առնչվող ռուսական բանաձեւ ՄԱԿ-ի ԱԽ-ում

## *Կանադացիները կհեռանան Սիրիայից*



**ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին առաջարկվել է Սիրիային վերաբերող ռուսական բանաձեւի նախագիծ, հաղորդում է Ֆրանսպրեսը:**

**Փաստաթուղթը դատապարտում է հակամարտության բոլոր մասնակիցների՝ ինչպես կառավարական զորքերի, այնպես էլ ընդդիմադիր շարժումների բռնարարքները: Միաժամանակ մտահոգություն է արտահայտվում Սիրիայի տարածքում գործող անօրինական կազմավորումներին զենքի ընդհատակյա մատակարարումների կապակցությամբ:**

**ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը նշում է, որ բանաձեւի նախագիծը նաեւ հավանություն է տալիս Արաբական լիգայի խաղաղարար գործողություններին եւ կոչ է անում իշխանություններ-ընդդիմություն քաղաքական երկխոսություն սկսել:**

**ՄԱԿ-ում ՌԴ ներկայացուցիչ Վիտալի Չուրկինի խոսքերով՝ փաստաթուղթը Դամասկոսի դեմ ուղղված պատժամիջոցներ չի առաջարկում, քանի որ դրանք «անարգասավոր» են:**

**Արեւմուտքը գոհունակությամբ է ընդունել ՌԴ բանաձեւի նախագծի առաջարկման փաստը: ՄԱԿ-ում Ֆրանսիայի ներկայացուցիչ Ժերար Արոն ռուսների առաջարկությունն անվանել է «անհավատալի իրադարձություն», քանի որ «Մոսկվան ի վերջո առաջարկեց Սիրիային վերաբերող բանաձեւի նախագիծ»: Արեւմուտքցի որոշ դիվանագետներ Ֆրանսպրեսի թղթակցին ասել են, որ փաստաթուղթը թեեւ հավասարության նշան է դնում Սիրիայի կառավարական ուժերի եւ ընդդիմության գործողությունների միջեւ, բայց ԱՄՆ-ը եւ մի շարք այլ երկրներ պատրաստ են քննության առնել Մոսկվայի առաջարկությունը եւ բանակցություններ սկսել:**

**Միաժամանակ հաղորդվում է, որ Կանադայի կառավարությունը որոշել է մինչեւ հունվար կազմակերպել Սիրիայից իր քաղաքացիների կենտրոնացված դուրսբերումը: Ամենամոտ ժամանակներս բոլոր կանադացիները կարող են օգտվել ինքնակամ տարհանման հնարավորությունից, նշում է Ֆրանսպրեսը:**

**Օտտավան ինչ-ինչ պատճառներով դեռեւս Սիրիայում գտնվող կանադացիներին կոչ է արել անհապաղ հեռանալ այդ երկրից:**

**Կանադան մտահոգ է, որ Արեւմուտքի երկրների եւ արաբական պետությունների միջազգային պատժամիջոցների հետեւանքով կտրուկ նվազել է Դամասկոսից իրականացվող առեւտրային չվերթերի թիվը: Բացի դրանից, ըստ ՄԱԿ-ի գնահատումների, Սիրիայում «սկսվել է իսկական քաղաքացիական պատերազմ»:**

# ՌԴ մարդահամարի արդյունքները



**Դեկտեմբերի 16-ին «Ռոսիյսկայա գազետա» թերթում հրապարակվել են 2010-ի հոկտեմբերին ՌԴ-ում անցկացված մարդահամարի արդյունքները: Դրանց համաձայն, երկրի բնակչությունը կազմում է 142 մլն 857 հազար եւ 2002-ի համեմատությամբ կրճատվել է 2,3 միլիոնով (1,6 տոկոսով):**

**Բնակչության թվով Ռուսաստանն աշխարհում 8-րդ տեղում է Չինաստանից, Հնդկաստանից, ԱՄՆ-ից, Ինդոնեզիայից, Բրազիլիայից, Պակիստանից եւ Բանգլադեշից հետո:**

**Տվյալները վկայում են, որ ՌԴ-ում բնակչության նվազման տեմպերն արագացել են. եթե 1989-2002 թթ. բնակչությունը կրճատվել է 1,8 միլիոնով, ապա 2002-2010 թթ.՝ արդեն 2,3 միլիոնով: Ըստ որում գյուղական բնակչության կորուստները եռապատիկ ավելի են քաղաքայինից: 2002-ից հետո ամայացել են ամբողջ գյուղեր. դրանց թիվը նվազել է 8,5 հազարով: Եվս 19,4 հազար գյուղական բնակավայր իրավաբանորեն գոյություն ունի, բայց փաստորեն ամայի է:**

**Ռուսաստանցիները դանդաղ ծերանում են. եթե 2002-ին միջին տարիքը 37,7 էր, ապա 2010-ին այն կազմել է 39:**

**Կանայք հետզհետե ավելի մեծ թիվ են կազմում. Ներկայումս նրանք տղամարդկանցից 10,7 միլիոնով շատ են: 2002-ի համեմատությամբ ամուսնական զույգերի քանակը նվազել է 1 միլիոնով եւ կազմում է 33 միլիոն (13 տոկոսը՝ ոչ պաշտոնական զույգեր): Ամուսնալուծությունները շատացել են, 16 տարեկանից փոքրերի ամուսնությունները պակասել են:**

**Ինչ վերաբերում է բնակչության ազգային կազմին, ռուսաստանցիների 80,9 տոկոսը իրեն ռուս է համարում (2002-ին՝ 80,64), թաթարների բաժինը մնացել է անփոփոխ՝ 3,87 տոկոս: Երրորդ տեղում մնում են ուկրաինացիները, բայց նրանց բաժինը 2,05-ից իջել է 1,41 տոկոսի: Նրանց հաջորդում են բաշկիրները, չուվաշները, չեչենները, հայերը, ավարները, մորդվաները եւ ղազախները: Մյուս ազգությունների համեմատությամբ ավելի շատ աճել է չեչենների, ավարների եւ հայերի թիվը:**

ԿԻՆՈԴԱՀԼԻՃ

# Մեկնարկում է իտալական ֆիլմերի փառատոնը

Դեկտեմբերի 20-25 կմեկնարկի իտալական ֆիլմերի փառատոնը, որի ընթացքում կցուցադրվեն 7 ֆիլմ:

Իտալիայի դեսպանը Հայաստանում՝ **Բրունո Սկապինին** փառատոնի մասին ասել է. «Այս տարի Հայաստանում տեղի է ունենում իտալական ֆիլմերի երկրորդ փառատոնը: Նախորդ տարի այն մեծ հաջողություն արձանագրեց հանդիսատեսի եւ քննադատների շրջանում, ինչն էլ մեզ վստահություն ներշնչեց այս մշակութային նախաձեռնության կարեւորության վերաբերյալ, եւ այն շարունակելու խթան հանդիսացավ: Ըստ այդմ, այս տարի եւս Իտալիայի դեսպանությունը, հաշվի առնելով իտալական ֆիլմերի մեծ ավանդը համաշխարհային կինոյի պատմության մեջ, առաջարկում է ժամանակակից Իտալիայի մշակութային եւ սոցիալական իրականության մասին պատմող կինոնկարների շարք: Կասկած չկա, որ իտալական կինեմատոգրաֆը դաստիարակչական մեծ նշանակություն ունի, եւ ֆիլմերը միջոց են դառնում՝ «Իտալիայի միտքն ու հոգին» ավելի մոտիկից ճանաչելու համար: Եվ հենց այս պարարտ հողի վրա է, որ արմատներ են գցել փոխադարձ համակրանքի եւ բարեկամության վրա հիմնված սերտ կապերը, որոնք ավանդաբար միավորում են Իտալիայի եւ Հայաստանի մշակույթները»:



Բոլոր ֆիլմերը կմեկնաբանվեն արվեստագիտության թեկնածու Սառա Նալբանդյանի կողմից, որոնք կցուցադրվեն իտալերեն լեզվով եւ անգլերեն սուբտիտրերով: Իտալական ֆիլմերի շաբաթը կբացվի Մարիո Ստեֆանո Պիետրոդարկիի եւ լարային կվինտետի փոքրիկ համերգով: Կհնչեն Էնիո Մորիկոնեի, Նինո Ռոտայի եւ Լուիս Բակալովի ստեղծագործությունները: Համերգին կհաջորդի լուսանկարիչ Վահե Մելքոնյանի «Հյուրընկալ Հռոմ» լուսանկարների ցուցահանդեսը: Նշենք, որ Վահե Մելքոնյանն իր առաջին ֆոտոխցիկի հետ ընկերացել է 7 տարեկանում եւ մինչ օրս մնում է հավատարիմ իր ընտրած գործին: Բազմաթիվ ֆոտոմրցույթների եւ ցուցահանդեսների մասնակից է: Վահեի առաջին անհատական ցուցահանդեսը կայացել է 2003 թ.-ին, Երեւանում: Առավել հայտնի են նրա՝ «Հայ գյուղը», «Գիշերային Երեւան», «Արեւելյան շուկա», «Կրակոտ Կարմեն», «Քրիստոնյա Հայաստան» շարքերը: 2008 թ.-ին Վահեն նախատեսել էր շրջագայել ողջ Իտալիայում, այդուհանդերձ Հռոմի հյուրընկալ մթնոլորտը նրան բաց չթողեց եւ ստեղծվեց «Հյուրընկալ Հռոմ» շարքը:

Մինչ փառատոնի մեկնարկը «**Ազգ**»-ը զրուցեց Պետական համազգային թատրոնի տնօրեն **Վարդան Մկրտչյանի** հետ, որն ասաց. «Անցյալ տարի եւս կազմակերպել էինք իտալական ֆիլմերի փառատոն, որն առաջին անգամ էր տեղի ունենում: Դրան զուգահեռ կազմակերպվեց Դավիթ Մինասյանի անհատական ցուցահանդեսը՝ «Իտալական կադրեր» խորագրով: Անցյալ տարվա արձագանքները մեզ վստահեցրին, որ մենք ճիշտ գծի վրա ենք եւ ծնվեց միտքը երկրորդ անգամ կազմակերպելու, ինչը շարունակական բնույթ կկրի»: «**Ազգ**»-ի հարցին, թե որն է փառատոնի նպատակը, Վարդան Մկրտչյանն պատասխանեց. «Նպատակն է ծանոթանալ իտալական մշակույթին, թե ինչ է կատարվում այնտեղ, ինչպիսի արվեստագետներ կան եւ ինչ ֆիլմեր են նկարահանվում: Սա նաեւ խթանում է, որ Հայաստանում սովորող լեզվաբան երիտասարդները զարգացնեն իտալերեն լեզվի իմացությունը», այն հարցին, թե ի՞նչ սկզբունքով են ընտրվել ֆիլմերը Վ. Մկրտչյանը պատասխանեց. «Փառատոնի շրջանակում ներկայացվող բոլոր ֆիլմերը, նկարահանվել են Իտալիայի մշակույթի նախարարության հովանավորությամբ եւ ընտրությունն էլ իրենց կողմից է եղել»:

Ընդգծենք, որ դեկտեմբերի 20-ին կցուցադրվի ռեժիսոր Ջակոմո Կամպիոտի «Այլեւս առաջվանը չի լինելու» կատակերգությունը: Այս ֆիլմը պատմում է համադասարանցիների մասին, որոնք դպրոցի ավարտական քննություններից հետո արձակուրդ են մեկնում, ինչը հետագայում վերածվում է մարտահրավերի միմյանց եւ սեփական անձի հանդեպ: Դեկտեմբերի 21-ին կցուցադրվի ռեժիսոր Ջուլիո Մանֆրոդոնիայի «Եթե քո տեղը լինեի» կատակերգությունը: Ֆիլմում ներկայացվում է, որ մի գիշեր Անդրեան, Բեբոն եւ Քրիստինան հանդիպում են ծովափին ու հանկարծ լույսի անսպասելի առկայծման հետեւանքով նրանցից յուրաքանչյուրն ընդունում է մյուսի կերպարանքը: Դեկտեմբերի 22-ին հանդիսատեսի դատին կներկայացվի Ջորջո Դիրիտտիի «Եվ քամին պտտվում է» դրաման: Ֆիլմը պատմում է ֆրանսիացի հովիվ Ֆիլիպի մասին, որ որոշում է թողնել Պիրենեյանների շրջանը եւ ընտանիքի հետ տեղափոխվել հեռու վայրեր, այն բանից հետ, երբ այդ շրջանում ատոմակայանի կառուցման մասին որոշում է կայացվում: Դեկտեմբերի 23-ին՝ ռեժիսոր Պուպի Ավատի «Ջովաննայի հայրիկը» դրաման: Այն մի տգեղ աղջկա մասին է, որի հայրը ցանկանալով հակառակն ապացուցել, իր ուսանողներից մեկին խնդրում է ուշադրության արժանացնել աղջկան: Սակայն այդ աղջնակը՝ Ջովաննան խանդի հողի վրա սպանում է իր լավագույն ընկերուհուն եւ հայտնվում հոգեբուժարանում: Նույն օրը կցուցադրվի եւս մի ֆիլմ՝ «Սեր կոչվող ճանապարհորդություն», որի ռեժիսորն է Միկելե Պլաչիդոն: Ֆիլմը պատմում է գրող Ռինա Ֆաչոնի մասին, որը հայտնի է Սիբիլլա Ալերամո գրական ծածկանունով: Կարդալով երիտասարդ պոետ Դինո Կամպանայի բանաստեղծությունները, սիրահարվում է նրան: Սակայն իր ծննդավայրում Դինոյին «խելագար» են անվանում: Եթե ճիշտ է, որ իր կյանքի մեծ մասը պոետն անց է կացրել հոգեբուժարանում, ապա ճշմարիտ է, որ «ժողովրդի ձայնը՝ Աստծու ձայնն է»: Դեկտեմբերի 24-ին կցուցադրվի «1000» Եվրո սեռունդ» կատակերգությունը, որի ռեժիսորն է Մասիմո Վենիերը: Այս ֆիլմը ներկայացնում է երեսունամյա մի կնոջ կյանքի պատմություն, որը աշխատում է մի ընկերության մարկետինգի բաժնում, որտեղից էլ ծավալվում են մի շարք բարդ իրադարձություններ:

Փառատոնի վերջին օրը՝ դեկտեմբերի 25-ին կցուցադրվի ռեժիսոր Էրմանո Օլմիի «Հարյուր մեխ» դրաման, որը ներկայացնում է փիլիսոփայության դասախոսի կյանքը, որ մի շարք տարօրինակ բաների համար գտնվում է հետախուզման մեջ:

Մուտքն ազատ է:

ՄԱՆԻԱ ՂԱՀՎԱՐՏՅԱՆ

Հայաստանի Ազգային արխիվում պահվող ցեղասպանության վերաբերյալ նյութերի հիման վրա Ազգային արխիվի նախաձեռնությամբ մինչեւ 2015 թվականը կհրատարակվի «Վշտապատում» եռահատոր գիրքը: Ազգային արխիվի տնօրեն **Ամատունի Վիրաբյանի** հավաստմամբ՝ գիրքն ընդգրկելու է ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ փաստաթղթեր ու ականատեսների վկայություններ: Այն ներառելու է բոլոր փաստերն անխտիր. «Նույնիսկ եթե կինը լացելով չորս նախադասություն է արտաբերել»,- հավաստիացնում է պրն. Վիրաբյանը:

Հատորները բաժանվել են ըստ աշխարհագրական ուղղվածության: Առաջին հատորը ներառում է Վանի նահանգը, երկրորդը՝ Բիթլիսի նահանգը՝ Սասունով ու Մուշով, երրորդն ընդգրկում է Արեւմտյան Հայաստանի մնացած շրջանները:

# «Վշտապատում» եռահատոր գիրքը

Հայաստանի Ազգային արխիվում ցեղասպանության վերաբերյալ շուրջ 12.000 նյութ է պահվում: Տարբեր ժամանակներում ստեղծված այս փաստաթղթերը, որոնք կներառվեն «Վշտապատումի» մեջ, ունեն հստակ դասակարգում: Առաջին խմբում ընդգրկված են դեռեւս 1890-ական թվականներին Արեւմտյան Հայաստանում կատարվող իրադարձությունները, երբ հայ բնակչության նկատմամբ կիրառվեց խոշորամասշտաբ ջարդի քաղաքականություն: Հետո՝ 1909-ին, երիտթուրքերի՝ իշխանության գլուխ անցնելը, այնուհետեւ 1914թ., երբ թուրքերի կողմից սկսվեց իրականացվել Մեծ եղեռնի քաղաքականությունը:

Արխիվում գտնվող կարեւոր փաստաթղթերից են Ամենայն հայոց կաթողիկոսի ստացած զեկուցագրերը տարբեր թեմերից, որտեղ խոսվում է թուրքերի իրականացրած տեղահանման եւ ոչնչացման քաղաքականության մասին:

Հաջորդ խումբը կազմում են այդ տարիներին Թուրքիայում մնացած ֆրանսիացի, գերմանացի դիվանագետների զեկուցագրերը՝ ուղղված իրենց երկրների կառավարություններին: Այս փաստաթղթերը 1960-ական թվականներին պատճենահանվել եւ պահպանվում են Ազգային արխիվում: Առանձին խմբի մեջ են դասակարգվում ռուսական բանակի ռազմական ամփոփագրերը, որոնք ամեն օր ուղարկվել են բանակի հրամանատարությանը: 1965թ.-ից հետո, երբ Հայաստանում այլեւս արգելված չէր ցեղասպանության մասին խոսելը, հնարավորություն ընձեռնվեց ականատեսներից գրի առնել Եղեռնի տարիներին նրանց տեսածն ու ապրածը: Սրանք էլ կազմում են արխիվում գտնվող ցեղասպանության վերաբերյալ նյութերի վերջին խումբը:

«Վշտապատումը» հրատարակվելու է հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Մեր այն հարցին, թե արդյո՞ք գիրքը երբեւէ լույս կտեսնի թուրքերեն լեզվով, Ա. Վիրաբյանը պատասխանեց, որ իրենք մտածում են այդ ուղղությամբ, խնդիրը հնարավորությունների հետ է կապված:

Պատմական գիտությունների թեկնածու **Գոհար Ավագյանը**, ով զբաղվում է գրքի կազմման աշխատանքներով, ասաց, որ բազմաթիվ փաստաթղթերի հետ միասին Հայաստանի Ազգային արխիվում պահվում են նաեւ Մեծ եղեռնի ականատեսների շուրջ 600 վկայություններ. «Նյութերը համարակալված են, դրանց վրա մատիտով համարներ կան նշված, որոնք, սակայն, ամբողջական չեն, ինչից էլ ենթադրում ենք, որ կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնք անհետացել են: Հայտնի է միայն, որ այդ տարիներին Զապել Եսայանը փաստաթղթերի մի ստվար մաս իր հետ տեղափոխել է Եգիպտոս՝ հավանաբար արտերկրում հրատարակելու համար, բայց այդպես էլ չի հրատարակել: Իսկ այդ փաստաթղթերի ճակատագիրը մեզ համար մնացել է անորոշ»,- ասաց Գ. Ավագյանը:

Եղեռնի ականատեսների վկայությունների ուսումնասիրման ժամանակ նկատվել է օրինաչափությունը, որ մարդիկ ոչ թե պարզապես պատմում են կատարված արհավիրքի մասին, այլ գրեթե բոլորը պատասխանում են միեւնույն հարցերին: Պարզվում է, որ այդ խառնակ ժամանակներում Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը ցեղասպանությունը վերապրած հայերի շրջանում հարցում է անցկացրել, ինչն էլ ամբողջությամբ ներառվելու է «Վշտապատում» գրքի մեջ: Ցեղասպանության փաստաթղթերից ուրվագծվում է այն հանգամանքը, որ այն գյուղերում, որտեղ հայերը դիմադրություն են կազմակերպել, զոհերի թիվը շատ ավելի քիչ է: Ինչպես նշեց Գ. Ավագյանը, այս փաստաթղթերում ամբողջությամբ ընդգծվում է թուրքերի ջարդի քաղաքականության պլանը, այն է՝ զինաթափել հայերին եւ մեջքից հարվածել:

Հայաստանի Ազգային արխիվի տնօրեն Ա. Վիրաբյանի կարծիքով «Վշտապատումը» բացառիկ է այնքանով, որ գրքում ներառված են փաստաթղթեր, որոնք ստեղծվել են հենց պատերազմի օրերին, երբ համընդհանուր ջարդերից ընդամենը մեկ տարի էր անցել, եւ մարդկանց հիշողության մեջ շատ վառ էր մնացել իրենց վերապրած ողբերգությունը: Այն հարցին, թե գիրքն արդյո՞ք ազդեցություն կունենա հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացում, Ա. Վիրաբյանն ասաց. «Ցեղասպանության ճանաչումը քաղաքական խնդիր է, եւ պետք չէ կարծել, թե որեւէ գիրք կամ փաստաթուղթ կարող է ինչ-որ ազդեցություն ունենալ: Իհարկե, վերջին հաշվով իր դերը կկատարի, չէ՞ որ թուրքերն ասում են, թե հայերը ոչ մի փաստաթուղթ էլ չունեն ցեղասպանության վերաբերյալ եւ իրենց հրատարակած գրքերում նշում են, որ եղել է պատերազմ եւ երկու կողմն էլ կռվել են»:

Մինչ այժմ Հայաստանի Ազգային արխիվում ցեղասպանության վերաբերյալ նյութերն ուսումնասիրել են երկու թուրք պատմաբաններ: Թուրքիայի ռազմական արխիվը, ուր հնարավոր է, որ լինեն ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթեր, փակ է բոլորի, այդ թվում՝ նաեւ իրենց երկրի բնակիչների համար:

Նշենք նաեւ, որ «Վշտապատում» գրքի առաջին հատորն արդեն կազմված է, որը մյուս երկու հատորների հետ լույս կընծայվի մինչեւ 2015 թվականը:

ԼԻԼԻԹ ՄԱՆՈՒԿՅԱՆ

# «Ծաղկազարդի» ելույթները Գերմանիայում

Հայ առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի «Ծաղկազարդ» հգական երգչախումբը համերգներով սկսեց հանդես գալ Գերմանիայում: 2007-ի սեպտեմբերին Երեւանում հիմնված խումբը կազմված է բարձրագույն երաժշտական կրթություն ունեցող պրոֆեսիոնալ երաժիշտներից, ինչը հնարավորություն է ընձեռնում բազմաժանր ծրագրով ներկայանալու: Անսամբլը բազմաթիվ բարեգործական ելույթներ է ունեցել դպրոցներում, մանկատներում, հիվանդանոցներում:

Բեռլինում ՀՀ դեսպանության հովանավորությամբ, ՀՀ սփյուռքի նախարարության ֆինանսավորմամբ իրականացվող գերմանական համերգային շրջագայության առաջին կայանը Բեռլինն էր, որտեղ դեկտեմբերի 16-ին Ալթ-Լիհթցով ավետարանական եկեղեցում տեղի ունեցավ համերգը, իսկ այսօր՝ դեկտեմբերի 17-ին ժամը 19.00-ին «Ծաղկազարդի» ելույթը կարելի է ունկնդրել Հանաու քաղաքի Վալլոնա-Նիդեռլանդական եկեղեցում, իսկ դեկտեմբերի 18-ին ժամը 18-ին՝ Շտուտգարդի Նոյգերոյթ էկումենիկ կենտրոնում:

ԱՆ. Հ.
Գերմանիա

# «Մովսես Խորենացի» մեդալ Վարդ Ալեխանյանին եւ Հակոբ Չոլաքյանին

Դեկտեմբերի 13-ին, ժամը 12:00-ին ՀՀ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** «Մովսես Խորենացի» մեդալ հանձնեց բարերար **Վարդ Ալեխանյանին** եւ հայազգեստ, մանկավարժ **Հակոբ Չոլաքյանին** (Սիրիա):

Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակի առթիվ, հայապահպանության գործում ներդրած ծանրակշիռ ավանդի, մայր հայրենիքին մատուցած ծառայությունների, ինչպես նաեւ Հայաստանի եւ օտարերկրյա պետությունների միջեւ բարեկամության ամրապնդմանը մեծապես նպաստելու համար՝ Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը «Մովսես Խորենացի» մեդալով պարգեւատրել է Վարդ Ալեխանյանին եւ Հակոբ Չոլաքյանին:

# Կանայք սկսում են մրցավեճն աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար



Վաղը Թուրքիայի Մերդին քաղաքում մեկնարկում է շախմատի կանանց աշխարհի թիմային առաջնությունը: 10 հավաքականներ պայքարի մեջ կմտնեն առաջնության պարգեւների համար: Նրանց թվում է նաեւ Հայաստանի կանանց հավաքականը, որը մասնակցում է ՖԻԴԵ-ի հրավերով: Մեր հավաքականի միջին վարկանիշը 2416 է: Մրցակարգի համաձայն յուրաքանչյուր թիմում ընդգրկված են 5 շախմատիստուհիներ, որոնցից 4-ը հանդես կգան տվյալ տուրում: Մեր հավաքականը գլխավորում է գրոսմայստեր Էլինա Դանիելյանը (2497), որը ցավոք հաջող հանդես չեկավ Չինաստանում ավարտված ինտելեկտուալ խաղերի շրջանակում անցկացված շախմատային փառատոնում: Դժվար է ասել, թե Էլինան ինչպիսի մարզավիճակով կներկայանա աշխարհի թիմային առաջնությանը: Ամեն դեպքում նա պետք է ձգտի Թուրքիայում իր խաղով նպաստել մեր հավաքականի հաջող մրցելույթներին:

2-րդ խաղատախտակի վրա հայտավորված է Լիլիթ Մկրտչյանը (2469): 3-րդ եւ 4-րդ խաղատախտակները կներկայացնեն Լիլիթ Գալոյանը (2383) եւ Մարիա Կուրսովան (2315): Պահեստային խաղացողն է Նելլի Աղինյանը (2263):

Հաղթողի գլխավոր հավակնորդներից մեկը Ռուսաստանի ընտրանին է, որն իր վարկանիշով (2509) 2-րդ տեղում է: Ռուսների մարզական պատիվը կպաշտպանեն Նադեժդա Կոսինցեւան (2546), Տատյանա Կոսինցեւան (2526), Վալենտինա Գունինան (2514), Նատալիա Պոգոնինան (2451) եւ Ալեքսանդրա Կոստենյուկը (2439):

Ամենաբարձր վարկանիշն ունի Չինաստանի հավաքականը (2528), որը գլխավորում է աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանը: Նա իր վարկանիշով (2578) զիջում է միայն Հնդկաստանի թիմի առաջատար Համպի Կոներուին (2600): Ի դեպ, Հնդկաստանի հավաքականն իր միջին վարկանիշով (2483) 3-րդն է մասնակիցների մեջ: Հնդիկներին հաջորդում են Վրաստանի (2482), Ուկրաինայի (2446), Հայաստանի (2416), Վիետնամի (2307), Հունաստանի (2240), Թուրքիայի (2067) եւ Հարավաֆրիկյան Հանրապետության (1877) հավաքականները:

# Չեմպիոնների մենամարտը




Այսօր ամերիկյան Ատլանտիկ Սիթի քաղաքում կկայանա պրոֆեսիոնալ բռնցքամարտի 2-րդ միջինքաշային կարգի Super Six մրցաշարի եզրափակիչ մենամարտը: Ռինգ դուրս կգան WBA-ի վարկածով 2-րդ միջինքաշային կարգի աշխարհի ներկայիս չեմպիոն, ամերիկացի Անդրե Ուորդը եւ WBC-ի աշխարհի չեմպիոնական գոտու տեր, բրիտանացի Կարլ Ֆրոչը:

Մասնագետներն այդ մենամարտում հաղթողի հիմնական հավակնորդ են համարում ամերիկացի բռնցքամարտիկին՝ հաշվի առնելով նաեւ այն, որ մենամարտը կայանալու է ԱՄՆ-ում: Հետաքրքրական է, որ Անդրե Ուորդը համաձայն չէ մասնագետների կարծիքին. «Շատերն այն կարծիքի են, թե հաղթողի հավակնորդը ես եմ: Չեմ կիսում այդ կարծիքը: Մենամարտը ցույց կտա, թե ով է արժանի հաղթանակին: Կհաղթի ուժեղագույնը: Չեմ պատրաստվում շատ խոսել առաջիկա մենամարտի մասին: Ծրագրել եմ հաղթել»:

Իրեն Մեծ Բրիտանիայի լավագույն բռնցքամարտիկ համարող Կարլ Ֆրոչը հավաստիացրել է, որ ռինգում անմոռանալի մենամարտ կցուցադրեն մարզասերներին. «Երաշխավորում եմ, որ դուք չեք հիասթափվի մեր մենամարտից: Ներկայումս շատ լավ մարզավիճակում եմ: Զգում եմ, որ ավելի կտրուկ, ուժեղ ու վստահ եմ դարձել: Պատրաստ եմ մենամարտին եւ գիտեմ, որ այդ երեկոն իմն է լինելու»:

«Կարլ Ֆրոչը հիանալի ցուցանիշներ ունի: Նա մենամարտել է լավագույնների հետ: Կարլն ի ծնե հաղթողի հոգեբանություն ունի: Առջեւում եւս մեկ կարեւորագույն մրցամարտ է Անդրե Ուորդի հետ, որը շատ լավ բռնցքամարտիկ է: Եթե լավը չլիներ, եզրափակիչ չէր մտնի: Ուորդի մի քանի մրցակիցներ նույնիսկ հրաժարվել են նրա հետ մենամարտելուց: Կարող եմ ձեզ վստահեցնել, որ Կարլը մինչեւ վերջ կմենամարտի», նշել է Ֆրոչի մարզիչ Ռոբերտ Մակրեկենը:

# Մխիթարյանը 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց

Շախմատի Բրազիլիայի առաջնությունում Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը 2-րդ անընդմեջ պարտությունը կրեց ու զգալիորեն վատթարացրեց մրցաշարային վիճակը: Նրա մրցակիցը Դիեգո դի Բեռարդինոն էր: 3 միավորով Մխիթարյանը 6 տուրից հետո ընթանում է 8-րդ հորիզոնականում:

5 միավորով աղյուսակը շարունակում է գլխավորել Ռաֆայել Լեյտաոն, որը հաղթեց Էվանդրո Բարբոսային: Առաջատարից կես միավորով հետ է մնում բրազիլական շախմատի վետերան Էնրիկե Մեկինգը, որը հաղթեց Ֆելիպե Էլ Դեբսին: 7-րդ տուրում Մխիթարյանը սեւերով կմրցի առաջատարի՝ Լեյտաոյի հետ:

# Քարիմ Բենզեման լավագույնն է Ֆրանսիայում

Մադրիդի «Ռեալի» հարձակվող Քարիմ Բենզեման ճանաչվել է Ֆրանսիայի այս տարվա լավագույն ֆուտբոլիստ «Ֆրանս ֆուտբոլ» շաբաթաթերթի անցկացրած հարցման արդյունքում: Ընթացիկ մրցաշրջանում Բենզեման արքայական ակումբի կազմում անցկացրած 13 հանդիպումներում 8 գոլի հեղինակ է դարձել: Ֆրանսիայի ազգային հավաքականում Եվրո-2012-ի ընտրական մրցաշարում նա 3 գոլ է խփել՝ նպաստելով ֆրանսիացիների ընդհանուր հաջողությանը:

Լավագույն մարզիչ է ճանաչվել «Լիլի» գլխավոր մարզիչ Ռուդի Գարսիան, որի գլխավորությամբ թիմը դարձավ Ֆրանսիայի չեմպիոն:

# Վիճակահանությունն անվանեց մրցակիցներին

Երեկ Շվեյցարիայի Նիոն քաղաքում կայացավ ֆուտբոլի չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի մասնակիցների վիճակահանությունը, որի արդյունքներն այսպիսին են.

ԲԿՄԱ-«Ռեալ»
«Զենիթ»-«Բենֆիկա»
«Մարսել»-«Ինտեր»
«Լիոն»-«Ապոել»
«Նապոլի»-«Չելսի»
«Միլան»-«Արսենալ»
«Բազել»-«Բավարիա»
«Բայեր»-«Բարսելոն»

Առաջին հանդիպումները նախատեսված են 2012-ի փետրվարի 14-15-ին եւ 21-22-ին: Պատասխան խաղերը տեղի կունենան մարտի 6-7-ին եւ 13-14-ին: Հետաքրքրական է, որ պայքարը շարունակող 16 ուժեղագույն ակումբներից 7-ը՝ «Բավարիան», «Ինտերը», «Բենֆիկան», «Ռեալը», «Բարսելոնը», «Մարսելն» ու «Միլանը» ժամանակին հաղթող են ճանաչվել չեմպիոնների լիգայում:

## ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

# Հայ մարմնամարզիկները 6 մեդալ նվաճեցին

**Ռուսաստանի Օբինսկ քաղաքում կայացած մարմնամարզության «Ոսկե ճայ» միջազգային 3-րդ մրցաշարում գերազանց հանդես եկան հայ մարմնամարզիկները՝ նվաճելով 6 մեդալ:**

**Երիտասարդների մրցաշարում բազմամարտում վաստակելով 79 միավոր, արծաթե մեդալի արժանացավ Վիգեն Խաչատրյանը: Նա իրեն լավագույնս դրսեւորեց նաեւ առանձին գործիքների վրա: Հենացատկերում եւ պտտաձողի վրա կատարած վարժություններում Վիգենը լավագույնն էր ու արժանացավ ոսկե մեդալների: Նժույգաթափերում եւ զուգափայտերի վրա կատարած վարժությունների համար հայ մարմնամարզիկը պարգեւատրվեց արծաթե մեդալներով:**

**Մեծահասակների մրցաշարում Վահագն Ստեփանյանը զուգափայտերի վրա կատարած վարժությունում 14,6 միավորով գրավեց 2-րդ տեղը: Աղջիկների մրցապայքարում Անուշ Մանուկյանը մարզական գերանի վրա կատարած վարժությունում ցույց տվեց 4-րդ արդյունքը:**

# Հաջող մեկնարկը շարունակություն չունեցավ

Չինաստանում ավարտվեց ինտելեկտուալ խաղերի շրջանակում անցկացված շախմատային փառատոնը: Վերջում մասնակիցներն իրենց ուժերը չափեցին «կույր» շախմատում:

Էլինա Դանիելյանը, որ մեկնարկային 2 տուրերում 1,5 միավոր էր վաստակել, հետագայում այնքան էլ հաջող չխաղաց ու 7 հնարավորից վաստակած 3,5 միավորով 16 մասնակիցների մեջ գրավեց 9-րդ տեղը: Միակ հաղթանակը նա տոնեց ավարտական տուրում մրցաշարի հետնապահ Էլմիրա Սկրիպչենկոյի նկատմամբ, որը մեկ միավորով եզրափակեց աղյուսակը: Իսկ մինչ այդ Էլինան հաշտություն էր կնքել Հարիկա Դրոնավալիի եւ Ելենա Դեմբոյի հետ, պարտվել էր Էլիզաբեթ Պյոտչին ու Վիկտորիա Չմիլիտեին:

«Կույր» շախմատում բոլորից հաջող հանդես եկավ աշխարհի ներկայիս չեմպիոնուհի, չինացի Հոու Յիֆանը՝ վաստակելով 5,5 միավոր: 2-րդ տեղը 4,5 միավորով զբաղեցրեց Վիկտորիա Չմիլիտեն, նույնպիսի արդյունքով 3-րդը Ալեքսանդրա Կոստենյուկն է:

Տղամարդկանց մրցաշարում 3 շախմատիստներ վաստակեցին առավելագույն՝ 5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով հաղթող ճանաչվեց հունգարացի Զոլթան Ալմաշին, 2-րդ եւ 3-րդ տեղերը զբաղեցրին Մաքսիմ Վաշիե-Լագրավն ու Վուգար Հաշիմովը:

# Որոշվեցին վերջին 4 ուղեգրերի տերերը

Վերջնագիծը հատեց ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարը: Հայտնի դարձան հաջորդ փուլի վերջին 4 մասնակիցները: Պայքարը կշարունակեն «Ալկմարը», «Ուդինեզեն», «Բրյուգեն» եւ «Ռուբինը»:

A խմբում հանդես եկող «Ռուբինը» հաջողությամբ լուծեց հաջորդ փուլ դուրս գալու խնդիրը՝ Հունաստանում ոչ-ոքի (1-1) խաղալով ՊԱՕԿ-ի հետ: Վերջինս 12 միավորով գրավեց 1-ին տեղը: 10 միավորով 3-րդ տեղում հայտնվեց «Տոտենհեմը», որը հյուրընկալվելիս 4-0 հաշվով ջախջախեց «Շեմրոկ Ռովերսին»:



G խմբում ժամկետից շուտ ուղեգրերից մեկին տիրել էր Խարկովի «Մետալիստը»՝ ապահովելով նաեւ 1-ին տեղը: Իսկ 2-րդ ուղեգրի բախտը վճռվեց «Ալկմար»-«Մետալիստ» խաղում, որում ոչ-ոքի (1-1) արդյունքը բավարար էր հոլանդական ակումբին հաջորդ փուլ դուրս գալու համար: Այդ խմբում կայացած մյուս խաղում «Աուստրիան» 2-0 հաշվով պարտության մատնեց «Մալմյոյին»:

Բավականին խճճված իրավիճակ էր ստեղծվել H խմբում: 1-2-րդ տեղերում ընթացող «Բրյուգեի» եւ «Բրագայի» մրցավեճում ոչ-ոքին 2 թիմերին էլ ձեռնտու էր ուղեգիր նվաճելու համար: Եվ գրանցվեց 1-1 հաշիվ: Այնպես որ «Մարիբորի» նկատմամբ «Բիրմինգհեմի» տոնած հաղթանակը (1-0) այլեւս ոչ մի նշանակություն չուներ անգլիացիների համար:

I խմբում 2-րդ ուղեգրի բախտը վճռվեց «Ուդինեզե»-«Սելթիկ» խաղում: Հյուրերին միայն հաղթանակ էր անհրաժեշտ, սակայն դա նրանց չհաջողվեց: Գրանցվեց ոչ-ոքի (1-1) եւ ուղեգիրը բաժին հասավ «Ուդինեզեին»: Խմբի հաղթող «Ատլետիկոն» 3-1 հաշվով պարտության մատնեց ֆրանսիական «Ռենին»:

B եւ C խմբերում ուղեգրերի տերերը վաղուց էին որոշվել, ուստի վերջին տուրի հանդիպումները մարզական առումով այլեւս նշանակություն չունեին: Գրանցվեցին այսպիսի արդյունքներ. «Հաննովեր»-«Վորսկլա»՝ 3-1, «Կոպենհագեն»-«Ստանդարտ»՝ 0-1, «Հապոել» Թել Ավիվ-«Լեգիա»՝ 2-0, «Էյնդհովեն»-«Ռապիդ» Բուխարեստ՝ 2-1:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Բարի եւ վայրի... կապիտալիզմ

*Հայաստանում 1 բնակչի հաշվով 1700 քմ վարելահող կա, Չինաստանում՝ 1000 քմ: Վերջինում պարենային ինքնաբավություն կա, ՀՀ-ում՝ անհասնում ներկրումներ*



«**Ազգի**» նոյեմբերի 25-ի համարում տպագրած «Արդյունավետ գյուղգործունեություն Ավստրիայում, Չինաստանում...» հոդվածում խոստացել էինք առավել ընդարձակ տեղեկատվություն հաղորդել աշխարհի ամենամեծաթիվ բնակչությունն ունեցող այս երկրում պարենային ինքնաբավության ու առաջին անհրաժեշտության պարենմթերքների գների վերաբերյալ: Դրա համար փաստարկ էինք ներկայացրել Ավստրիայի Գրաց քաղաքում ապրող մեր հայրենակցուհի Կ. Ս.-ի այս տարվա նոյեմբերին Չինաստան գիտական գործուղման մեջ գտնվելու օրերին կատարած լուսանկարները:

Հայտնի է որ չինացիների թիվ 1 սնունդը բրինձն է: Ըստ ԱՄՆ-ում լույս տեսնող «Համաշխարհային փաստեր. 2011» տեղեկատուի՝ 1,3 մլրդ բնակչություն ունեցող այս երկիրը վերջին տասնամյակի յուրաքանչյուր տարում արտադրում է 160-180 մլն տոննա բրինձ, որը 1 բնակչի հաշվով ստացվում է 130 կգ: Ինքնաբավության առումով վստահություն ներշնչող կիլոգրամներ, զուգահեռ արտադրում է 160 մլն տոննա եգիպտացորենի հատիկ, մի քիչ պակաս՝ հացահատիկ: Թե որտեղ են համեմատաբար սակավահող Չինաստանում կարողանում նման ահռելի քանակի բերք աճեցնել, իրոք առեղծված է: Բայց պաշտոնական փաստի դեմ ոչինչ հակադրել չենք կարող. արտադրում են, եւ ինչպես նկարում է պատկերված, բրնձի 1,5 կգ-ը վաճառում 7,90 յուանով, որը ՀՀ արժույթով մոտ 450 դրամ է, 1 կգ-ը ստացվում է 300 դրամ:

Արձանագրենք, որ վերջին 20-ամյակում չինացիներն իրենց սննդակարգում առավել մեծ տեղ են տալիս կենդանական ծագման մթերքներին: Երկրում պահվող 500 մլն գլուխ խոզը, 100 մլն խոշոր եղջյուրավորն ու միլիարդներով հաշվվող հավերը հնարավորություն են ստեղծել մսատեսակները մատչելի դարձնել: Աշխարհում արտադրվող խոզի մսի յուրաքանչյուր կիլոգրամի 500 գրամը չինական ծագում ունի, 1 բնակչի հաշվով այս մսատեսակի տարեկան արտադրությունը անցնում է 50 կգ-ը, երբ ՀՀ-ի ցուցանիշը տասնապատիկ պակաս է, որն էլ կանխորոշում է խոզի մսի գինը: Լուսանկարներից մեկում պատկերված են Պեկինում վաճառվող հավի միսն ու դրա 500 գրամի գինը, որը ՀՀ արժույթով մոտ 600 դրամ է:



Ավստրիայում ընդունվող ռուսական հեռուստաալիքների գովազդերից էլ տեղեկանում ենք Գերմանիայում որոշ պարենամթերքների հայաստանցիների համար տարօրինակ ցածր գներին: Օրինակ. 10 կգ-անոց կարտոֆիլի պարկը առաջարկվում է 1,79 եվրոյով, խոզի ընտիր մսի կգ-ը՝ 2,19 եվրոյով, որոնք ՀՀ արժույթով ստացվում են 900 եւ 1100 դրամ: Անցնող գյուղատնտեսական տարում կարտոֆիլի կգ-ի դիմաց 90 դրամը մեր հողագործները միայն ծախսերի տեսքով են ներկայացնում, իսկ խոզի մսի արտադրությունը շատ առավել բարդ գործ է համարվում:

«Ինչո՞ւ» հարցը հնչում է ինքնաբերաբար: ՀՀ գյուղոլորտի պատասխանատուները, նախարարներից ու տեղակալներից մինչեւ վարչությունների պետեր ու բաժինների վարիչներ, մշտապես են հիշում համայնավարության տարիներին իրենց ստացած լավագույն ուսումն ու մասնագիտությունները: Ուրեմն ի՞նչն է խանգարում նրանց, ասենք, չին ղեկավարների օրինակով վարել իրենց գործունեությունը: Ունակությունների խնդիր չունեն՝ հայի խելքին մեռնեմ, գործարարությունում էլ մրցակցությունից դուրս են՝ ապուպապերը աշխարհով մեկ են առեւտուր արել, մնում է... կամեցողությունը: Այս առումով վերլուծություններն ու գնահատականները մի կողմ թողնենք, փոխարենը մի պարզ փաստ նշենք. հասարակածին մոտ երկրներում աճող բանանը Մոսկվայի առեւտրային ցանցում վաճառվում է 35-40 ռուբլով, որը հավասար է 450 դրամի, Գրացում գնում եմ 0,99 եվրոյով, մոտ 500 դրամ, Պեկինում առաջարկվող գինը ցուցադրված է նկարում, մոտ 600 դրամ, հայաստանյանը նվազագույնը 750 դրամ է. ինչո՞ւ:



Հայ հանրությունը տարիներ շարունակ ակնկալում է, որ հերթական Ամանորը կդիմավորի իր առօրյան տնօրինողների բարեհաճ կամեցողության պայմաններում: Ավաղ. հասել ենք մի վիճակի, երբ անգամ ամիսը 300 հազար դրամ աշխատավարձով Հայաստանում հնարավոր չէ ընտանիքի միջին կենցաղ ապահովել, քանզի գները մեզանում շաաաաատ են բարձր, որը ոմանք որակում են որպես կապիտալիզմին հատուկ վայրի դրսեւորումներ: Ներկայացված լուսանկարներն ու արված դիտարկումները ցուցադրում են հին ու նոր կապիտալի ու գործարար միջավայրի պայմաններում ապրող մարդկանց առօրյայի միայն որոշ մասը, որը հայաստանաբնակների պարագայում հիմնական մաս է իր բոլոր անցանկալի դրսեւորումներով:

**ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ**
**Ավստրիա, Գրաց**

# Ղազախստանն անհանգիստ է

Ղազախստանի հարավարեւմտյան քաղաքներում բողոքի զանգվածային խոշոր ցույցեր են ընթանում: Երկրի դատախազության տվյալներով՝ ամեն ինչ սկսվել է, երբ Ժանաչգեն քաղաքում խափանվել են Ղազախստանի անկախության 20-ամյակին նվիրված միջոցառումները, ինչի հետեւանքով երկու ոստիկան վիրավորվել են: Ավելի ուշ Ղազախստանի գլխավոր դատախազ **Ասիատ Դաուլբաեւը** հայտարարեց, որ կան տասնյակ զոհեր եւ վիրավորներ, այդ թվում՝ ոստիկանների շրջանում: Բողոքի ակցիան սկսել են արդեն մի քանի տարի իրենց ցածր աշխատավարձից դժգոհ նավթագործները, որոնց միացել են հազարավոր քաղաքացիներ: Ըստ ԶԼՄ-ների՝ զինվորականները կրակ են բացել ցուցարարների ուղղությամբ, իսկ մի շարք իրավապաշտպաններ նշում են, որ վիրավորների թիվը կարող է հասնել հարյուրների:

Ղազախստանը Հայաստանի դաշնակիցն է ՀԱՊԿ շրջանակներում, իսկ այս կառույցի վերջին՝ երկրների նախագահների մակարդակով անցկացված գագաթաժողովի ժամանակ Բելառուսի նախագահ **Ալեքսանդր Լուկաշենկոն** առաջարկեց, որ ՀԱՊԿ-ի արագ արձագանքման զորամիավորումները «նպատակային կլինի, եթե ծառայեցվեն նաեւ անդամ երկրներում ներքին հանգստությունն ապահովվելու համար»:

*ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

# Բնակարաններ՝ 97 զինծառայողների

**Պաշտպանության նախարարությունից տեղեկանումենք,որ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը եւ զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, գեներալ-գնդապետ Յուրի Խաչատուրովը դեկտեմբերի 16-ին Երեւանում մասնակցել են ՀՀ զինված ուժերի 97 զինծառայողների համար նախատեսված բնակելի շենքի բացման արարողությանը:**

**Շնորհավորելով բնակարանամուտը տոնող զինծառայողներին՝ Սեյրան Օհանյանը նշել է, որ զինծառայողների եւ նրանց ընտանիքների սոցիալական ապահովության հարցերը, այդ թվում՝ բնակարաններով ապահովումը, պաշտպանության նախարարության կարեւորագույն խնդիրներից են եւ գտնվում են պետության ուշադրության կենտրոնում:**

**Նորակառույց շենքի բացումից հետո սպաներն իրենց բնակարաններում հյուրընկալել են պաշտպանության նախարարին եւ բարձրաստիճան զինվորականներին: Ծանոթանալով բնակարանային պայմաններին ու կատարված աշխատանքներին՝ Սեյրան Օհանյանը գոհունակությամբ արձանագրել է, որ սպաների համար նախատեսված բնակարանները կառուցված են շինարարական արդի չափանիշներով եւ ապահովված են անհրաժեշտ հարմարություններով:**

## ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է Ազգ-Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

**Հարգելի ընթերցող: Սկսվել եւ շարունակվում է «Ազգ» օրաթերթի 2012 թ. բաժանորդագրությունը: Բաժանորդագրության մանրամասներին կարող եք ծանոթանալ այն իրականացնող ներքնշյալ մամուլի տարածման գործակալություններից.**

- Պրես-Ստենդ- (հեռ.՝ 54-41-99, www.armpress.am)
- Հայմամուլ- (հեռ.՝ 45-30-78, կայքէջ՝ www.haymamul.info.am)
- Հայփոստ- (հեռ.՝ 51-47-51, www.haypost.am)
- Պրես-Ատտաշե- (հեռ.՝ 27-02-22, www.press-attache.am)
- Բլից Մեդիա- (հեռ.՝ 58-17-13, www.pressinfo.am)
- Թերթին կարող եք բաժանորդագրվել նաեւ Հանրապետության-47 հասցեում գտնվող խմբագրատանը (հեռ՝ 58-29-60, կայքէջ՝ www.azg.am):

### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Այն ընթերցողները, ովքեր կներկայացնեն թերթի բաժանորդագրության կտրոնը, իրավունք կունենան ամիսը մեկ անգամ անձնական բնույթի մեկ անվճար հայտարարություն տեղադրել թերթում, որը 1 շաբաթ կտեղակայվի նաեւ էլեկտրոնային կայքէջում:**







ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 15.12.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: